Azg
armenian daily
29 ՅՈՒՆԻՍ 2000 ՇԱԲԱԹ 120 (2088)

Եվրախորհուրդը խվեարկեց Հայաստանի եւ Ադրբեջանի անդամության օգտին

Երեկ, Երեւանի ժամանակով երեկոյան ժամը 10:35-ին Ստրասբուրգի կենտրոնավայրում հրապարակվեցին Եվրախորհրդին Հայաստանի անդամության հարցի քննարկման վարչին կայացած քվեարկության արդյունքները՝ 23 կողմ, 7 ձեռնպահ եւ 0 դեմ: Այսպիսով, փաստորեն Հայաստանը որպես լիիրավ անդամ մուտք է գործելու Եվրախորհուրդ, եթե առաջիկա սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին Եվրախորհրդի արտգործնախարարների ժողովը այլ որոշում չկայացնի, ինչը գործնականում անհավանական է: Տեղեկացնենք, որ քննարկման ընթացքում ելույթ են ունեցել 41 անդամ ունեցող այս կառույցի 20 անդամներ, որոնք բոլորն էլ արտահայտվել են Հայաստանի օգտին, ինչպես հեռախոսով տեղեկացրին **«Ազգին»** Ֆրանսիայում Հայաստանի դեսպանատան աշխատակիցներ Համլետ Գասպարյանը եւ Վահագն Աթաբեկյանը: Ավելի ուշ տեղի ունեցավ նաեւ Ադրբեջանի անդամության քվեարկությունը, որի արդյունքները նույնպես դրական էին:

ԱՄՆ

Քոչարյան-Քլինթոն հանդիպման առանցքը կազմեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը

Հունիսի 27-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդիպում է ունեցել Մ. Նահանգներ նախագահ Վիլյամ Ջեֆերսոն Քլինթոնի հետ:

Հանդիպման ժամանակ նախագահները քննարկել են հայ-ամերիկյան երկկողմ հարաբերությունների, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վերջին զարգացումների, Հայաստան-ԱՄՆ տնտեսական կապերի, տարածաշրջանային խնդիրների հետ կապված հարցեր:

Նախագահ Քոչարյանը ներկայացրել է ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի վերջին փուլը, անդրադարձել է հայ-ամերիկյան աշխատանքային խմբի գործունեությանը: ԱՄՆ նախագահը վերահաստատել է իր երկրի եւ անձամբ իր պատրաստակամությունը՝ գործադրելու անհրաժեշտ ջանքերը, որպեսզի երկարատեւ լուծում գտնվի հակամարտության կարգավորման համար, շեշտել է, որ շահագրգռված է տարածաշրջանում խաղաղությամբ եւ կայունությամբ, ինչպես եւ Հայաստանի բարգավաճմամբ:

Նույն օրը նախագահը հանդիպել է նաեւ հայ-ամերիկյան աշխատանքային խմբի ամերիկյան կողմի ղեկավար դեսպան Թեյլորի հետ: Խոսակցության թեման Հայաստանում իրականացվող բարեփոխումներն էին, իշխանությունների որդեգրած տնտեսական քաղաքականությունը եւ տարբեր ոլորտներում համագործակցության հնարավորությունը:

Հունիսի 27-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդիպել է սենատոր Բոբ Դոուլի, Ամերիկայի հայկական ազգային հանձնախմբի ղեկավարների եւ ԱՄՆ-ում հրեական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Ռոբերտ Մուրադյան

ՓԱՐԻԶ

Հայոց ցեղասպանության հարցը Սենատի օրակարգ չմտցվեց

Ֆրանսիայի Սենատի սոցիալիստների խմբի նախագահ Կլոդ Էսթիեն Ֆրանսահայերի հունիսի 18-ին Փարիզում կազմակերպած ցույցի ժամանակ խոստացել էր, որ հունիսի 28-ին, երեկ, Սենատի նիստում «անմիջական քննարկման» էր դրվելու Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Երեկ, զանգահարելով Փարիզում ՀՀ դեսպանություն, **«Ազգը»** տեղեկացավ, որ Սենատում սոցիալիստ եւ համայնավար խմբավորումների որոշմամբ, տակտիկական նկատառումներով, Հայոց ցեղասպանության հարցը չի մտցվել օրակարգ: Հայանպաստ դիրքորոշմամբ հայտնի այդ կազմակերպությունները որոշել են հարցի քննարկումը տեղափոխել մինչեւ առաջիկա աշուն, ավելի ստույգ՝ հոկտեմբեր, երբ սենատորները վերադարձած կլինեն արձակուրդից:

Մահացավ ամերիկահայ նշանավոր կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը

Հունիսի 21-ին Սիաթլում (Մ. Նահանգներ), 89 տարեկանում մահացել է ամերիկահայ նշանավոր կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը: Ծնված 1911 թ. Մասաչուսեթսի նահանգի Սոմերվիլ քաղաքում, բուն անունով Ալան Հարությունի Չամնաքյանը սովորել է Բոստոնի երաժշտանոցում: 1933 թ. նրա առաջին սիմֆոնիան ստացել է Ս. Էնդիգոնի անվան մրցանակը, որից հետո լայն բացվել են երաժշտական լսարանները նրա ստեղծագործությունների առջեւ, որոնք հետզհետե ծոր են բերել Ծայրագույն Արեւելքի երկրների ժողովուրդների երաժշտության մեղեդայնությունն ու ռիթմերը: Վաղ շրջանի ստեղծագործությունները կրել են Սիբելիուսի ոճը: Ավելի ուշ Արեւելքի երաժշտությունը, այդ թվում՝ հայկական երաժշտությունը դարձել են հիմքը նրա ստեղծագործությունների: Գրել է շատ: Ամերիկյան քննադատներն Ալան Հովհաննեսին ներկայացրել են որպես երաժշտական ծառ, որից անընդհատ պտուղ է քաշվում: Նրա ձայնադարանը հաշվում է ավելի քան 500 ստեղծագործություն՝ սիմֆոնիա, օպերա, կամերային՝ վոկալ եւ գործիքային երկեր, որոնցում հաճախ են օգտագործվում հնդկական, ճապոնական եւ հայկական նվագարաններ: Հայկական

ստեղծագործություններից ծանոթ են «Սուրբ Վարդան» սիմֆոնիան, «Անահիտ» ֆանտազիան, «Ախթամար», «Լուսածագ», «Վարագ», «Արեւագալ», «Արքիկ», «Թալին» կոնցերտները:

Ամերիկյան մի շարք թերթեր լայն անդրադարձներ են հրապարակել մեծ երաժշտի մահվան կապակցությամբ:

Ադրբեջանցիները Սպիտակ տունն էլ են շրջափակում

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 28 ՅՈՒՆԻՍ, ՏՆԱՐՔ: ԱՄՆ-ում բնակվող ադրբեջանցիները պիկետ են անցկացրել Սպիտակ տան մոտ՝ Հայաստանի եւ ԱՄՆ-ի նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Բիլ Քլինթոնի այնտեղ կայացած հանդիպման ժամանակ: Պիկետի մասնակիցները ծեռներին ունեցել են ադրբեջանական դրոշներ եւ պաստառներ, որոնց վրա գրված է եղել. «Քոչարյանը պատերազմի հանցագործ է», «Վերջ դնել հայկական ագրեսիային»: Սպիտակ տնից Ռոբերտ Քոչարյանի հեռանալուց հետո պիկետի մասնակիցներն այնտեղ հավաքված լրագրողներին հայտարարել են, թե գործողության գլխավոր նպատակն էր տեղեկացնել ամերիկյան հասարակայնությանը Հայաստանի ագրեսիվ դերի մասին եւ բողոք հայտնել այդ պետության ղեկավարի Վաշինգտոն ժամանելու առնչությամբ»: «Մենք ԱՄՆ-ին կոչ ենք անում դադարեցնել անաչառ դիրքորոշում եւ վերացնել 907-րդ ուղղումն ու օգնել Ադրբեջանին, այլ ոչ թե Հայաստանին», հայտարարել են նրանք: Ինչպես հայտնի է, ԱՄՆ Կոնգրեսի Ազգաբնության աջակցության ակտի 907-րդ ուղղումն արգելում է ԱՄՆ կառավարության ուղղակի օգնության տրամադրումն Ադրբեջանին՝ վերջինիս կողմից իրականացվող Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակման առնչությամբ: 907-րդ հոդվածը նաեւ սահմանափակում է ադրբեջանա-ամերիկյան ռազմական համագործակցության զարգացման հնարավորությունները: 907-րդ հոդվածը չեղյալ հայտարարելու նպատակով պատգոնական եւ ոչ պատգոնական Բաֆի կողմից տարիներ շարունակ ծեռնարկվող փորձերն առայժմ Ադրբեջանի համար ցանկալի արդյունք չեն տվել:

Ուրի հիվանդության սրացում Զորի Բալայանի մոտ

Բժիշկները սրտի հիվանդության սրացում են արձանագրել հանրահայտ հրապարակախոս, գրող Զորի Բալայանի մոտ, որը նախորդ օրը տեղափոխվել էր Նորք-Մարաշի բժշկական կենտրոն: Երեկ բժիշկները ռենտգենյան հետազոտության են ենթարկել սիրտը սնուցող անոթաստները (կորոնոգրաֆիա): Ավելի ուշ մեզ հաջողվեց հեռախոսով զրուցել մեր բարեկամի հետ: Ինչպես միշտ, խոսակցությունն անմիջապես «շեղվեց» դեպի ազգային-քաղաքական թեմաներ: Մեր եւ ընթերցողների անունից շուտափույթ ապաքինում մաղթեցինք մեր մեծ բարեկամին: Հիշեցնենք, որ նախապես Զորի Բալայանը երկու անգամ ենթարկվել է սրտի վիրահատության, մեկը Մ. Նահանգներում, մյուսը՝ Երեւանում, հայտնի վիրաբույժ Հրայր Հովակիմյանի ծեռով:

Մախային անցակետում ոչ թե ՀՀ դեսպանին, այլ 6 իրանահայերի են սպասեցրել

ԵՐԵՎԱՆ, 28 ՅՈՒՆԻՍ, ՏՆԱՐՔ: Հայաստանում Իրանի դեսպանությունը հերքել է հաղորդումներն այն մասին, որ երկու օր առաջ Հայաստանի հետ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանի (ԻԻՀ) մախային անցակետում (Նորդուզ-Մեղրի) վեց ժամ սպասեցրել են ԻԻՀ-ում Հայաստանի դեսպան Գեղամ Ղարիբջանյանին: Հունիսի 28-ին Երեւանի **«Ազգ»** թերթում դիվանագիտական աղբյուրների վկայակոչմամբ, տպագրված տեղեկությունների համաձայն, դեսպանին սպասեցրել են Թեհրանից Երեւան վերադառնալիս: Ինչպես հունիսի 28-ին հաղորդեցին Երեւանում ԻԻՀ դեսպանության մամուլի ծառայությունից, սպասեցումը ոչ մի առնչություն չի ունեցել հայ դեսպանի հետ, այլ վերաբերել է նրան ուղեկցող՝ ծագումով հայ Իրանի 6 քաղաքացիներին եւ կրել է զուտ տեխնիկական բնույթ: Դեսպանությունում նաեւ նշել են, որ սպասեցումը տեւել է վեց ժամից զգալիորեն ավել:

Նաիրի Բաղալյանի քրեական գործը կարճվեց

ԵՐԵՎԱՆ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունն իրականացնող մարմինը հունիսի 28-ին կարճել է լրագրող, «Լոգոս» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Նաիրի Բաղալյանի մասով քրեական գործը, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցված է, խափանման միջոցը՝ վերացված: Այս մասին հայտնեց ինքը՝ Նաիրի Բաղալյանը: Նրա մասով գործը կարճվել է ահաբեկչական ակտին օժանդակելու մեջ նրան ներկայացված մեղադրանքի ապացուցված չլինելու պատճառով:

ԱՅԺ

Մեծ Սարգսյանը Մոսկվայում արժանացել է ամենաբարձր մակարդակով ընդունելության

Հուլիսին Ռուսաստանի նախագահը կընդունի Ռոբերտ Քոչարյանին

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հունիսի 27-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն ընդունել է պատգոնական այցով Մոսկվայում գտնվող ՀՀ պատգամավորության նախագահ, Հայաստանի նախագահին առընթեր Անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանին: Պրն Սարգսյանը հանդիպել է նաեւ Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Կասյանովին եւ ՌԴ պատգամավորության նախագահ Իգոր Սերգեեւին: Այցը հետաքրքիր էր մի շարք առումներով: Նախ, թեեւ պլանավորված էր, սակայն տեղի ունեցավ հենց այն օրերին, երբ նախագահ Քոչարյանը Վաշինգտոնում հանդիպում էր ԱՄՆ նախագահ Քլինթոնին եւ փոխնախագահ Գորին: «Սնարք գործակալությունը», հենվելով Մոսկվայի աղբյուրների վրա, այս ամենը պատահական զուգադիպություն չի համարում. «Այն կոչված է ցույց տալու արտաքին քաղաքական կուրսում պատգոնական Երեւանի նվիրվածությունը փոխլրացման սկզբունքին: Ռուսաստանցի մի շարք փորձագետների կարծիքով, դա բավականին կարեւոր մարտավարական քայլ է, որը պետք է ցույց տա Մոսկվայի առաջնային նշանակությունը Երեւանի համար նույնիսկ այն շրջանում, երբ ընթանում է Ռոբերտ Քոչարյանի եւ Բիլ Քլինթոնի բարձր մակարդակի հանդիպումը»: Երկրորդ, հունիսի 27-ին, երբ Սերժ Սարգսյանն ամենաբարձր մակարդակի հանդիպումներ էր ունենում Ռուսաստանի բարձրաստիճան պատգոնյաների հետ, նույն օրը պատգոնական այցով ԱՄՆ էր մեկնել Ադրբեջանի պատգամավորության նախագահ Սաֆար Աբիեւը՝ այդ երկրի պատգամավորության նախագահ Ուիլյամ Քոհենի հրավերով, քննարկելու են

«ռազմական համագործակցությանն առնչվող հարցեր»:

Տես էջ 2

ՈՒՇԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆ

Արտաքսի սահմանապահ ջոկատը նշեց 45-ամյակը

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի Արտաքսի սահմանապահ ջոկատի հրամանատարությունն ու անձնակազմը հանդես են եկել նախաձեռնությամբ այդ զորամիավորմանը Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի (1897-1982) անունը շնորհելու վերաբերյալ: Այդ մասին ջոկատի պետ գնդապետ Վյաչեսլավ Բիրյուկովը հայտարարեց ջոկատի կազմավորման 45-ամյակին նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ:

Ավելի քան 60 հազար կիլոմետրով է ձգվել Ռուսաստանի Դաշնության պետական սահմանը, ԱՊՀ անդամ պետությունների սահմանները, եւ դրանցից 69 կմ վստահված է պահպանել արտաքսցիներին: Ջոկատը կազմավորվել է ԽՍՀՄ ներքին զորքերի նախարարության 1955 թ. հունիսի 24-ի հրամանով (այն ժամանակ ԽՍՀՄ սահմանապահ զորքերը մտնում էին ՆԳՆ համակարգի մեջ): Ժառանգորդն է 40-րդ Դամարլուի սահմանապահ ջոկատի, որը ծնունդ էր առել 1924 թ. հունիսի 24-ին 36-րդ առանձին սահմանապահ գումարտակի եւ սահմանապահ արգելափակիչ պահակակետերի հիման վրա:

Այսօր ջոկատի անձնակազմը, չնայած մտնելական, քաղաքական, օդերեւութային բնույթի բոլոր դժվարություններին, իր բոլոր ջանքերը ներդնում է ծառայողական-մարտական խնդիրների հաջող լուծման համար: Պետական սահմանի այս հատվածը պետք է հուսալիորեն պահպանվի հանուն Հայաստանի շահերի, հանուն Ռուսաստանի ռազմավարական շահերի, հայտարարեց գնդապետ Վ. Բիրյուկովը:

Ռուս սահմանապահներին ջերմորեն շնորհավորեց Հ�հ ազգային անվտանգության նախարար գեներալ-լեյտենանտ Կառլոս Պետրոսյանը: Մեզ տված հարցազրույցում նա ասաց, որ Արտաքսի ջոկատի կազմավորումից ի վեր ստեղծված հարուստ ավանդույթներն այն ամուր հիմքն են, որ սահմանապահների այսօրվա սերնդին թույլ են տալիս ծառայությունը կատարել բարձր մակարդակով: Ինչպես ընդգծեց նախարարը, հայ-ռուսական համագործակցությունը սահմանապահ ու հատուկ ծառայությունների բնագավառում հաջողությամբ զարգանում է մեր երկու պետությունների միջեւ ռազմավարական գործընկերության շրջանակներում: Գեներալ Կառլոս Պետրոսյանը հայտնեց, որ վերջին ամիսներին մի շարք հանդիպումներ է ունեցել ՌՊ արտաքին հետախուզության ծառայության, անվտանգության դաշնային ծառայության, սահմանապահ դաշնային ծառայության ղեկավարության, ՌՊ անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Իվանովի հետ: Նրանց հետ քննարկելով բազմաթիվ կարեւոր հարցեր: Այսօրվա միջազգային բարդ իրավիճակում դաշնակից պետություններիս ռազմավարական հարաբերությունները լուրջ խորացման եւ ընդլայնման կարիք ունեն տարածվելով բոլոր այլ ոլորտների վրա, համոզված է ՀՀ ազգային անվտանգության նախարարը:

Ավելի քան երկու դար առաջ Ռուսաստանը նվաճել է կովկասյան տերություն անվանվելու իրավունքը: Այդ իրավունքը հաստատված է ոչ թե սրով ու կրակով, այլ գիտության, մշակույթի, կրթության ավանդույթների տարածմամբ, իր հերթին ասաց ՀՀ Աժ պաշտպանության, ներքին գործերի ու ազգային անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վահան Հովհաննիսյանը:

Արտաքսի ջոկատը ՌՊ սահմանապահ դաշնային ծառայության (ՍՊԾ) լավագույն զորամասերից մեկն է, հայտնեց Հայաստանում ՍՊԾ օդերեւութային խմբի պետ գեներալ-լեյտենանտ Միխայիլ Նայմիլոն: Ջոկատը հանդես է եկել «21-րդ դար ՍՊԾ լավագույն զորամասի կարգավիճակով» նախաձեռնությամբ, որն այժմ ուղարկվել է Մոսկվա ՍՊԾ կոլեգիայում քննարկվելու նպատակով:

ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Վասիլի Ղազարյանն ընթերցեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի շնորհակալական ուղերձը: Ջոկատի պատմությունը հայրենիքին ծառայելու, ՀՀ եւ ՌՊ սահմանների պաշտպանման խնդիրների իրականացման վառ օրինակ է, նշել է վարչապետը, սահմանապահներին մաղթելով երջանկություն, առողջություն եւ հաջողություններ:

Ջերմ էր ՌՊ դեսպանության հյուպատոսական բաժնի վարիչ Վլադիմիր Խուլեւի խոսքը: Մենք դեսպանությունում հպարտությամբ ենք նայում ռուս զինվորին, որը Հայաստան է ժամանել ծառայելու, ասաց հյուպատոսը: Ջոկատի 45-ամյա հոբելյանը ոչ միայն փառավոր ավանդույթ է, դրանց շարունակությունը, այլեւ դժվարին, ամենօրյա աշխատանք: Թող Հայաստանը ձեր համար լինի ոչ միայն ծառայության վայր, այլեւ դառնա ձեր երկրորդ տունը, երկիր բարեկամների ու ընկերների, որոնցից դուք չեք բաժանվի ողջ կյանքում, մաղթեց դիվանագետը:

Այսի ընկած սպաներին ու զինվորներին հանձնվեցին կրծքանշաններ, նվերներ ու պատվոգրեր:

Արարողությունն ավարտվեց սահմանապահների հանդիսավոր երթով: Այնուհետեւ մարտիկները ցույց տվեցին իրենց մարզական ու գեղարվեստական ընդունակությունները:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ,
ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար
Արտաքսա-Երեւան

Մեծ Սարգսյանը Մոսկվայում արժանացել է ամենաբարձր մակարդակով ընդունելության

Սկիզբը էջ 1

Սակայն հետաքրքրականն այն էր, որ Աբիեւի այցը Միացյալ Նահանգներ նախապես պլանավորված չէր: Մեկ հետաքրքրական հանգամանք եւս. ռուսական OPT, HTB, PTP հեռուստաընկերությունները, «Մայակ» ռադիոկայանը հունիսի 27-ի ամբողջ եւ հունիսի 28-ի ցերեկային լրատվության հեռարձակման ժամանակ չեն անդրադարձել Մեծ Սարգսյանի մոսկովյան հանդիպումներին: Կարելի է ենթադրել, որ ռուսական ՁԼՄ-ները չեն կարեւորել Պուտին-Սարգսյան, Կասյանով-Սարգսյան եւ Մերգեեւ-Սարգսյան հանդիպումները, ինչը ինչ հավանական է, կամ այդ հանդիպումները պահվել են խորհրդապահական մթնոլորտում:

Երեկ «Ձվարթնոց» օդակայանում Մեծ Սարգսյանն անձամբ մանրամասնեց մոսկովյան հանդիպումները: Անդրադառնալով Ռուսաստանի նախագահի հետ հանդիպմանը, պրն Սարգսյանն ասաց. «Քննարկվել են ռազմաքաղաքական, տնտեսական եւ այլ կարեւոր հարցեր: Հանդիպումը կարեւորվում էր նաեւ նրանով, որ նախագահ Քոչարյանի Մոսկվա կատարելիք այցի նախապատրաստական փուլ էր: Հանդիպել եմ նաեւ Ռուսաստանի վարչապետ Կասյանովի հետ, որի ընթացքում քննարկել ենք մեր երկրի տնտեսությանը վերաբերող կարեւորագույն խնդիրներ. գազի սակագների հարցեր, Ռուսաստանի ձեռնարկությունների հետ Հայաստանում համատեղ ձեռնարկություններ հիմնելու եւ այլ տնտեսական հարցեր», փորձ-ինչ արտառոց է: Սակայն, պրն Սարգսյանի համար արտառոց ոչինչ չկա, եւ հարցին պատասխանեց փիլիսոփայորեն. «Խանդո՞ւմ եք... Ասացի՝ ես ոչ միայն պատգամավորության նախագահ եմ, այլեւ, եթե չեք մոռացել, Անվտանգության խորհրդի քարտուղար: Երկրորդ. այս բոլոր հանդիպումները տեղի են ունենում նախագահ Քոչարյանի Մոսկվա կայանալիք պատմական այցի նախապատրաստման ենթաստվսում: Բացի այդ, անկախ պատմությունից, գրված դիրքից, եթե Հայաստանի որեւէ պետական պատմություն կամ այլ մարդ կարող է իր փորձ լուսաբերել մեր երկրի տնտեսության զարգացման գործին, ապա նա պարտավոր է անել»:

Մեծ Սարգսյանը հերքեց այն լուրերը, համաձայն որոնց ՌՊ պատգամավորության նախագահը խիստ տոնով պահանջել է վճարել հայ կուրսանտների նախկին տարիներին չվճարված ուսման վարձը. «ՌՊ պատգամավորության նախագահը որեւէ հարցում կոշտ դիրքորոշում չի ցուցաբերել եւ չի էլ ցուցաբերի»:

Եվս մեկ հարց պրն Սարգսյանին. ինչո՞վ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ պատգամավորության նախագահը ընդունելության է արժանանում Ռուսաստանի նախագահի կողմից, երբ նախկին վարչապետ Արամ Սարգսյանը ցանկության դեպքում չկարողացավ հանդիպել Պուտինի հետ: «Մենք հետաքրքիր ժողովուրդ ենք: Չգիտեմ ինչու՝ կամ խանդում ենք, կամ չենք հասկանում, կամ... ես չգիտեմ ինչո՞ւ, ո՞վ եւ ի՞նչ պատճառով որեւէ պետական պատգամավորի չհաջողվեց հանդիպել Պուտինին», կրկին փիլիսոփայորեն պատասխանեց պրն Սարգսյանը, ավելացնելով, թե անձնական հարաբերությունները (նկատի ունի իր եւ Պուտինի-Թ. Հ.) որոշակի դեր կատարում են, բայց դրանք պետական հարաբերություններում չեն կարող լինել վճռորոշ. «Եվ ընդհանրապես, ի՞նչ է նշանակում անձնական հարաբերություններ Ռուսաստանի նախագահի եւ Հայաստանի պատգամավորության նախագահի միջեւ: Մեր հարաբերությունները լուրջ, պետական հարաբերություններ են», եզրափակեց Ս. Սարգսյանը:

«ՍԱՐՏԻ 22»-Ի ԳՈՐԾ

Նոր դատապարտյանը հանդիպեց Սամվել Բաբայանին

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ մահափորձ կազմակերպելու մեջ մեղադրվող ԼՂՀ պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանը հանդիպեց իր նոր պաշտպանի հետ: Ինչպես հայտնեց «Սահմանադրական իրավունք» միության Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ Արմեն Ջավադյանը, Ս. Բաբայանի պաշտպանությունն այժմ իրականացնելու է երեւանում գործող փաստաբան ժուդեխ Շահարյանը: Ինչպես նշեց Արմեն Ջավադյանը, ներկայումս վերոհիշյալ գործով նախաքննությունն ավարտվել է, եւ այժմ ընթանում է գործի ընդհանուր նյութերի հետ ծանոթություն: Այսպիսով, ինչպես նշեց նա, ամբողջ նախաքննությունն անցավ առանց պաշտպանների մասնակցության:

Ինչպես հայտնի է, Բաբայանի նախկին պաշտպաններ Նիկոլայ Բաղդասարյանը եւ Գագիկ Հակոբյանը հայտարարել էին, թե չեն կարողանում լիարժեք պաշտպանություն իրականացնել, քանի որ ԼՂՀ գլխավոր դատախազությունը հրաժարվում է հնարավորություն տալ նրանց հանդիպել Բաբայանի հետ եւ ծանոթանալ գործի ամբողջ նյութերին մինչեւ նախաքննության ավարտը: «Նոյյան տապանի» ունեցած տվյալներով, Ս. Բաբայանի նոր պաշտպան ժուդեխ Շահարյանին գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն տրվելու է:

Կրկին աշխատում է Ստեփանակերտի հացի գործարանը

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օրերս իր աշխատանքն է վերսկսել Ստեփանակերտի հացի գործարանը, որտեղ այսօր գործում են հացի եւ մակարոնի արտադրամասերը: Ձեռնարկությունը օրական արտադրում է չորս տեսակի երեք տոննա հաց եւ մեկ տոննա մակարոն: Նախատեսվում է վերականգնել նաեւ հրուշակեղենի արտադրությունը, որի համար ձեռնարկությունում համապատասխան վերականգնողական աշխատանքներ են տարվում: Ներկայումս երեք հերթափոխով գործարանում աշխատում է 80 մարդ:

Երեւանի ջրամատակարարման համակարգը մասված է

Քաղաքապետը բացառում է կաշառքը որպես գործելակերպ

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երեւանի խմելու ջրի համակարգի կառավարումը հունիսի 1-ից չորս տարի ժամանակով հանձնվել է իտալական «էյ.Սի.Ի.էյ.» կազմակերպությանը: Երեւանում կան 12 ջրաղբյուրներ, որոնք մայրաքաղաքը մատակարարում են ջրով, իսկ մայրաքաղաք ներմուծվում է վայրկյանում 11 հազար լիտր ջուր: Երեւանում կան մոտ 850 ցայտաղբյուրներ, որոնց մի մասը հնարավոր չի լինում գործարկել՝ ջրի պակասի պատճառով: Ներկայումս գանձվում է ջրի վարձավճարների 20%-ը միայն: Այս տվյալները հնչեցին Երեւանի քաղաքապետարանում հունիսի 28-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ:

Ինչպես տեղեկացրեց քաղաքապետ Ալբերտ Բազեյանը, այս տարվա ամռանը վատթարացել է Երեւանի ջրամատակարարումը: Ըստ նրա, քաղաքի ջրային համակարգը մասված է, տարիներ շարունակ նորոգման աշխատանքներ չեն կատարվել, որի պատճառով հաճախ վթարներ են տեղի ունենում: Բացի այդ, խմելու ջուրը հաճախ օգտագործվում է ոռոգման նպատակներով, ինչը բացառելու նպատակով պետք է հանձնարարել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ապահովել ոռոգման ջրի ցանցի լավ աշխատանքը: Խմելու ջուրն օգտագործվում է նաեւ տարբեր կազմակերպությունների՝ ավտոլվացման կետերի, լվացքատների, զվարճության վայրերի կողմից, ինչը պետք է արգելել: Ըստ քաղաքապետի՝ բացի վերոհիշյալից, նշված կազմակերպությունները զբաղվում են նաեւ ջրագողությամբ: Ա. Բազեյանի խոսքերով, ներկայումս առաջնահերթ խնդիրներ են Երեւան մուտք գործող ջրի քանակի ապահովումը, ինչպես նաեւ ջուրը իսկապես սպառողին հասցնելը: Ըստ նրա, նշված խնդիրներն իրականացնելու եւ տարբեր կազմակերպություններ պարբերաբար սուղայցեր կատարելու համար հուլիսի 1-ից կստեղծվի աշխատանքային խումբ:

Խորհրդակցության ժամանակ Ալբերտ Բազեյանը նաեւ հավաստիացրեց, որ ինքը սկզբունքային կերպով քաղաքապետարանում բացառում է կաշառքը՝ որպես գործելակերպ:

ՈՒՇԱԴՐՈՒՄ. Երեկվա մեր համարի չորրորդ էջում տպագրված Հարություն Խաչատրյանի «Էներգետիկ ճգնաժամի պատճառը շրջափակումն է» հոդվածում անտեղի դրված վերջակետը խախտել է նախադասության իմաստը: Չորրորդ սյան վերջին տողից սկսվող նախադասությունը պետք է կարդալ այսպես. «Զուր չէ, որ առ այսօր էներգետիկ ճգնաժամը չի հաղթահարվել Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում... (շարունակությունը՝ ինչպես տեսնում)»: Ներողություն ենք խնդրում հեղինակից:

■ **Հարգելի խմբագրություն,** ուզում եմ ձեր թերթի միջոցով շնորհակալության խոսք հղել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի ողջ անձնակազմին՝ տնօրեն Լիդա Մուրադյանին, վիրաբույժ Հրայր Հովակիմյանին, բժիշկ Արամ Նազարյանին, բոլոր մյուսներին, որոնց անուններն այդպես էլ չհաջողվեց իմանալ, ցուցաբերած մարդկային եւ հրաշալի վերաբերմունքի համար: Մեր պայմաններում հազվագյուտ մարդիկ կարող են նման բժշկական կենտրոն եւ նման մթնոլորտ ստեղծել: Դա հաջողվել է Լ. Մուրադյանին, որի ջանքերի արգասիքն է այդ կենտրոնի գոյությունը: Մի քանի օր առաջ մայրս Մարուսյա Վարոսյանը, վիրահատվեց այս կենտրոնում եւ այժմ նրա վիճակը օր-օրի բարելավվում է: Շնորհակալություն:

Հարգանքներով՝

Արմեն Եգանյան
Նոյեմբերյանի շրջան
գյուղ Կողբ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության թ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային
ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի
Տողը «Ազգին» պատկանիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

«Շահումով խաղերի եւ խաղատների մասին» օրինագիծը երեկ 73 ձայնով վավերացվեց առաջին ընթերցմամբ: Օրենքի ամբողջական ընդունումից հետո հայաստանյան մայրաքաղաքը կծերբազատվի «Խաղատուն», «Խաղասրահ», «Սիգմա-ոլոտեր» մակագրություններով հաստատություններից, որոնք բազմանում են սնկի արագությամբ: Այս ոլորտում որդեգրվել է նոր մարտավարությունը. խաղային ինդուստրիան տեղափոխել երեւանից դուրս հատուկ այդ նպատակների համար նախատեսված գվարճավայրեր: Երեւանում խաղատներ կտեղակայվեն միայն կառավարության որոշման համաձայն: Ամենամեծ դժվարությունը որոշեց վաղաժամ ընդհատել իր գործունեությունը, հատկապես Սերգեյ Երիցյանի ջանքերով ամբողջացած օրինագծի քննարկումը հետաձգվեց մինչեւ հուլիսի 4-ը: Մեզ համար կարեւորագույն այս օրինագիծը, հուսանք, կարճանա շահագրգիռ քննարկման, հանգի ազատական Հայաստանում չորրորդ իշխանությունն ամենակայացած կառույցներից եր, որն այսօր հայտնվել է լուրջ տեղատտույտում, եւ արժե զգուշանալ, որ չգործի ժողովրդական հին խոսքը. «Հոնք ուղղելու փոխարեն, աչքն էլ չհանենք»: Հեռուստա եւ ռադիոընկերությունների գործունեության օրենսդրական կարգավորումը պահանջում է բոլոր կողմերի փոխհամաձայնեցված դիրքորոշում: Հակառակ դեպքում մեծ է գայթակղությունը յուրաքանչյուրին եւ ամեն ինչ ուղղորդելու:

Մինչ օրինագծերը քննվում են դահլիճում, ետնաբեմում խոսնակի վերընտրությունն է

Ազ մեծամասնություն կազմող «Միասնություն» խմբակցությունն այդպես էլ ղեկավար չունի. Անդրանիկ Մարգարյանի վարչապետ նշանակվելուց հետո թափուր է ոչ միայն այս պաշտոնը, այլեւ հարցական Ազ խոսնակի խնդիրը: Դեռ խորհրդարանական արձակուրդի նախաշեմին Ազ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի նախաձեռնությամբ հավաքվել է «Միասնության» վճռորոշ ձայն ունեցող պատգամավորների շրջանակը՝ քննարկելու խորհրդարանի ղեկավարի փոփոխության դեպքում ծագող հնարավոր սցենարների խնդիրը: «Միասնություն» խմբակցության ՀՀԿ անդամ Գալուստ Սահակյանն ի պատասխան «Ազգի» հաստատեց, որ նման խոսակցություն եղել է. սակայն ամեն ինչ հետաձգվել է սեպտեմբերին: «Քանի «Միասնությունը» չի որոշել, թե ով է գլխավորելու խմբակցությունը, դժվար է պատկերացնել, թե ինչպես կորոշվի Ազ նոր խոսնակի անցողիկ միասնական թեկնածությունը»: Ըստ «Ազգի» աղբյուրների, «Միասնությունը» բավական խրթին վիճակում է, որովհետեւ Արմեն Խաչատրյանի փոփոխության պարագայում դարձյալ բարձրանում է սպասուս էվոյի հարցը, այսինքն Ազ խոսնակ պետք է լինի՞ ՀԺԿ ներկայացուցիչ, թե՞ ՀԺԿ-ն այս պաշտոնը կգիջի «Հանրապետականին»: Նման պայմանավորվածության դեպքում ՀՀԿ-ն պատրաստ կլինի գիջել խմբակցության ղեկավարի պաշտոնը ՀԺԿ ներկայացուցչին: Սակայն առկախ է հարցի ամենակարեւոր կողմը, եթե անգամ «Միասնությունը» պայմանավորվեց եւ ընտրեց իր կազմից միացյալ թեկնածուի, արդյոք այդ թեկնածուն կարժանանա մյուս խմբերի եւ խմբակցությունների հավանությանը: Կհավաքվի՞ 66 ձայն Արմեն Խաչատրյանին պաշտոնանկելու եւ նույնքան նոր խոսնակ ընտրելու համար: Այս պարագայում դարձյալ կարեւորվում է «Կայունություն» խմբի դիրքորոշումը, նրանց եւ «Միասնության» ձայները բավարար կլինեն Ազ ղեկավարությունը փոխելու համար:

Խոսնակը դեռեւս չի վերադարձել Ստրասբուրգից, ուր որոշվում է մեր անդամակցությունը Եվրախորհրդին, վերջնականապես չի կողմնորոշվել ՀԺԿ-ն՝ հեռացնե՞լ, թե՞ ոչ Արմեն Խաչատրյանին կուսակցության շարքերից, թեեւ ՀԺԿ քաղխորհրդի եւ վարչության ներկայությամբ Կենտրոնի ՀԺԿ սկզբունքային կազմակերպությունը Արմեն Խաչատրյանի ներկայությամբ շաս կտրուկ հարց է բարձրացրել, ուստի հարցի հանգուցալուծումը հետաձգվում է: Հատկապես որ խորհրդարանում, ինչպես նաեւ իշխանության այլ օղակներում դարձյալ սկսել է շրջանառվել ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանի պատգամավոր ընտրվելու տարբերակը: Այս տարբերակի իրականացման դեպքում Ազ նոր խոսնակի հարցը կլուծվի ինքնաբերաբար, առանց հավելյալ բանակցություն-սակարկումների: Սակայն Ստեփան Դեմիրճյանը խորհրդարան կարող է մտնել հոկտեմբերին: Մինչեւ հոկտեմբեր շաս բան կարող է փոխվել մեր քաղաքական ներկայացնակում: Երբ «Ազգը» դիմեց ՀԺԿ նախագահին, վերջինս հակիրճ եր. «Աշունը բոլոր դեպքերում քաղաքական ակտիվացման շրջան է, բայց պատգամավոր առաջադրվելու մասին վաղ է խոսել, ժամանակը ցույց կտա»:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Պատժե՞լ մոլախաղերի իրավախախտներին, թե՞ ոչ

Ազ-ն բարդ երկընտրանքներում՝ խաղատներից մինչեւ սեփական խոսնակի գնահատում



մամբ հաստատված բարձրակարգ եւ մեծ հյուրանոցներում՝ հինգաստղանի: Ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Գագիկ Արզումանյանը վերջին վրձնահարվածներով ամբողջացրեց խաղատների եւ շահումով խաղերի ոլորտում կառավարության նոր քաղաքականությունը, որին պատգամավորները հիմնական մեծամասնությամբ համաձայն էին: Սակայն այս օրենքի վավերացումից հետո ծագեց առաջին խութը. քրեական եւ վարչական իրավախախտումների օրենսգրքերում կառավարությունն առաջարկում է վերացնել մոլախաղերի համար նախատեսված պատժիչ հոդվածները, այսինքն՝ քր.օր.-ում եւ վարչական իրավախախտումների օրենսգրքում վերացնել մոլախաղերին մասնակցելու, մոլախաղեր կազմակերպելու համար նախատեսված պատժամիջոցները: Ազ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Վարդան Խաչատրյանը ընդգծեցավ. «Արգելելով Երեւանի կենտրոնում խաղատների եւ խաղասրահների գործունեությունը, մենք կստեղծենք որջեր եւ օրենքով կարգավորված դաշտից մարդկանց կմղենք մոլախաղերի համար որջեր պահելու, ուր մեծ փողեր կոչտվեն»: Վարդան Խաչատրյանն առաջարկեց այս օրինագիծը հանել քվեարկությունից՝ հակառակ դեպքում իրենք դեմ կքվեարկեն: Բայց քանի որ Ազ-ն որոշել եր ընդհատել արտահերթ նստաշրջանը մինչեւ հուլիսի 4-ը, խնդիրը ինքնըստինքն որոշեց վաղաժամ ընդհատել իր գործունեությունը, հատկապես Սերգեյ Երիցյանի ջանքերով ամբողջացած օրինագծի քննարկումը հետաձգվեց մինչեւ հուլիսի 4-ը: Մեզ համար կարեւորագույն այս օրինագիծը, հուսանք, կարճանա շահագրգիռ քննարկման, հանգի ազատական Հայաստանում չորրորդ իշխանությունն ամենակայացած կառույցներից եր, որն այսօր հայտնվել է լուրջ տեղատտույտում, եւ արժե զգուշանալ, որ չգործի ժողովրդական հին խոսքը. «Հոնք ուղղելու փոխարեն, աչքն էլ չհանենք»: Հեռուստա եւ ռադիոընկերությունների գործունեության օրենսդրական կարգավորումը պահանջում է բոլոր կողմերի փոխհամաձայնեցված դիրքորոշում: Հակառակ դեպքում «Միասնության» վճռորոշ ձայն ունեցող պատգամավորների շրջանակը՝ քննարկելու խորհրդարանի ղեկավարի փոփոխության դեպքում ծագող հնարավոր սցենարների խնդիրը: «Միասնություն» խմբակցության ՀՀԿ անդամ Գալուստ Սահակյանն ի պատասխան «Ազգի» հաստատեց, որ նման խոսակցություն եղել է. սակայն ամեն ինչ հետաձգվել է սեպտեմբերին: «Քանի «Միասնությունը» չի որոշել, թե ով է գլխավորելու խմբակցությունը, դժվար է պատկերացնել, թե ինչպես կորոշվի Ազ նոր խոսնակի անցողիկ միասնական թեկնածությունը»: Ըստ «Ազգի» աղբյուրների, «Միասնությունը» բավական խրթին վիճակում է, որովհետեւ Արմեն Խաչատրյանի փոփոխության պարագայում դարձյալ բարձրանում է սպասուս էվոյի հարցը, այսինքն Ազ խոսնակ պետք է լինի՞ ՀԺԿ ներկայացուցիչ, թե՞ ՀԺԿ-ն այս պաշտոնը կգիջի «Հանրապետականին»: Նման պայմանավորվածության դեպքում ՀՀԿ-ն պատրաստ կլինի գիջել խմբակցության ղեկավարի պաշտոնը ՀԺԿ ներկայացուցչին: Սակայն առկախ է հարցի ամենակարեւոր կողմը, եթե անգամ «Միասնությունը» պայմանավորվեց եւ ընտրեց իր կազմից միացյալ թեկնածուի, արդյոք այդ թեկնածուն կարժանանա մյուս խմբերի եւ խմբակցությունների հավանությանը: Կհավաքվի՞ 66 ձայն Արմեն Խաչատրյանին պաշտոնանկելու եւ նույնքան նոր խոսնակ ընտրելու համար: Այս պարագայում դարձյալ կարեւորվում է «Կայունություն» խմբի դիրքորոշումը, նրանց եւ «Միասնության» ձայները բավարար կլինեն Ազ ղեկավարությունը փոխելու համար:

Խոսնակը դեռեւս չի վերադարձել Ստրասբուրգից, ուր որոշվում է մեր անդամակցությունը Եվրախորհրդին, վերջնականապես չի կողմնորոշվել ՀԺԿ-ն՝ հեռացնե՞լ, թե՞ ոչ Արմեն Խաչատրյանին կուսակցության շարքերից, թեեւ ՀԺԿ քաղխորհրդի եւ վարչության ներկայությամբ Կենտրոնի ՀԺԿ սկզբունքային կազմակերպությունը Արմեն Խաչատրյանի ներկայությամբ շաս կտրուկ հարց է բարձրացրել, ուստի հարցի հանգուցալուծումը հետաձգվում է: Հատկապես որ խորհրդարանում, ինչպես նաեւ իշխանության այլ օղակներում դարձյալ սկսել է շրջանառվել ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանի պատգամավոր ընտրվելու տարբերակը: Այս տարբերակի իրականացման դեպքում Ազ նոր խոսնակի հարցը կլուծվի ինքնաբերաբար, առանց հավելյալ բանակցություն-սակարկումների: Սակայն Ստեփան Դեմիրճյանը խորհրդարան կարող է մտնել հոկտեմբերին: Մինչեւ հոկտեմբեր շաս բան կարող է փոխվել մեր քաղաքական ներկայացնակում: Երբ «Ազգը» դիմեց ՀԺԿ նախագահին, վերջինս հակիրճ եր. «Աշունը բոլոր դեպքերում քաղաքական ակտիվացման շրջան է, բայց պատգամավոր առաջադրվելու մասին վաղ է խոսել, ժամանակը ցույց կտա»:

ՀԱԿԻՐՃ

Հայաստանում ծիրանի աննախադեպ բերք

ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ. Այս տարի Հայաստանում կարող է մինչեւ 18 հազար տոննա ծիրան հավաքվել, ինչը գրեթե 5 անգամ գերազանցում է նախորդ տարվա մակարդակը: Այդ մասին հաղորդեց ՀՀ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության եւ սերմաբուծության զարգացման վարչության պետ Գառնիկ Պետրոսյանը:

Նրա խոսքերով, բերքի գրեթե կեսը կգնվի պահածոների գործարանների կողմից՝ արտահնական խտանյութերի պատրաստման նպատակով: Այսօր գնման գինը տատանվում է 40-55 դրամի միջեւ:

Ծիրանի մինչեւ 20 տոկոսը նախատեսվում է արտահանել ԱՊՀ եվ եվրոպական երկրներ: Օրերս ինքնաթիռներով Շվեյցարիա է ուղարկվել ծիրանի բերքի 8 տոննա կազմող առաջին խմբաքանակը: Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանի արտաքին տերմինալին կից ստեղծվել է շաբ՝ արտահանվող մրգերի եւ բանջարեղենի օրերային ձեւակերպման նպատակով: Գյուղատնտեսության եւ տրանսպորտի ու կապի նախարարությունների միջեւ գոյություն ունեցող պայմանավորվածության համաձայն, գյուղատնտեսական արտադրանքի փոխադրումների հիմնական ուղղությունների առնչությամբ արտոնային ավիաչանակագներ են տրամադրվել: Երեւան-Մոսկվա երթուղով 1 կիլոգրամի դիմաց գանձվում է 0,42 դոլար, Երեւան-Սանկտ Պետերբուրգ երթուղով՝ 0,52 դոլար, իսկ Երեւան-Սոչի երթուղով՝ 0,37 դոլար:

Քաղաքացիներին մնում է մատաղ անել

Երեկ առավոտյան մետրոյի Բարեկամություն կայարանից դեպի Բաղրամյան պողոտա տանող կանգառում հիմից կոտրվել է էլեկտրահաղորդալարերը պահող մոտ տասը մետրանոց սյունը եւ ընկել փողոցի լայնքով: Երջանիկ պատահականությամբ ոչ երթեւեկող մեքենաների, ոչ կանգառում խմբված տասնյակ մարդկանց մեջ տուժողներ չեն եղել:

Շրջակայքում տեղակայված առեւտրի կետերի աշխատողների վկայությամբ, սյունը վաղուց թուլացած է եղել եւ յուրաքանչյուր անցնող տրամվայի ու տրոլեյբուսի հետ տատանվել է: Նրանց բազում ահազանգերին պատասխաններ չեն եղել:

Այան ջարդված մասում մեր թղթակիցը նշմարել է զոդվածքի հետքեր, ինչը վկայում է, որ ժամանակին հարցին փորձել են լուծում տալ «թեթեւ վիրահատությամբ»:

Ինչեւէ, կանգառում գտնվող քաղաքացիներից շատերը խոստացան դեպքի առիթով մատաղ անել:

ՍԵՓՈՒԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մինչ «Գրանդ տոբակոյի» համբերության բաժակը լցվում է, ներմուծողները նեղանում են ու նյարդայնանում...

Եվս մեկ ծխախոտ ներմուծողի՝ «Արսոյլ» ՀՁ նախագահ Գուրգեն Արսենյանի պատասխանը «Գրանդ տոբակոյին»

Ինչպես տպավորվում եր, «Գրանդ տոբակո» ՀՁ բավականին խիստ գնահատականներով հարուստ ասուլիսին սկսեցին հերթով արձագանքել սիգարետ ներմուծողները: Երեկ հերթը «Արսոյլ» ՀՁ նախագահ Գուրգեն Արսենյանինն եր: Ենթադրվում եր, որ պրն Արսենյանի պատասխանը պետք է լինի կոնկրետ, ըստ էության, սակայն ասուլիսն ավելի շատ հիշեցնում եր տեսական մի զեկույց՝ կատեգորիկ գնահատականներով զարմանալի ու երբեմն հակասական մտքերով: Նախ պրն Արսենյանին անհանգստացնում է այն փաստը, որ մեր հասարակության մեջ, նաեւ՝ կառավարության (ներկա ու նախորդ) ծրագրերում կա որոշ առումով բացասական դիրքորոշում ներմուծողի նկատմամբ, ներմուծող-արտադրող վեճը դառնում է սկզբունքային, մինչդեռ, ըստ նրա, արտադրողի ու ներմուծողի միջեւ տարբերություն չկա, երկուսն էլ հարկատուներ են, երկուսն էլ պետք է ունենան հավասար պարտավորություններ ու իրավունքներ: Որպես առաջնոյց նա 10-15 որոշ շարունակ մեջբերումներ արեց ՀՀ Սահմանադրության մոտ մեկ տասնյակ հոդվածներից՝ ազատ շուկայի, մրցակցության, ընտրության իրավունքի, սեփականության շահերի պաշտպանության եւ այլնի մասին: Դրանից հետո պրն Արսենյանը, իր խոսքերով, որպես պրոֆեսիոնալ տնտեսագետ, սկսեց լրագրողներին բացատրել տարբեր տնտեսական մոդելներ: Թե Հայաստանում ի՞նչ մոդել է կիրառվում, նա դժվարացավ ձեւակերպում տալ, բայց որ վատ բան է սպասվում, դրանում ներմուծող գործարարը չի կասկածում: Համենայն դեպս, մի բան պարզ է, «Գրանդ տոբակոյի» հայտարարությունները, կառավարության դիրքորոշումը՝ դեմքով դեպի արտադրողը, ըստ պրն Արսենյանի, լավ բանի չեն հանգեցնի: Ըստ նրա, Հայաստանը դրանով գնում է մի ճանապարհով, որով արդեն անցել ենք, երբ տնտեսությունը պլանավորվում եր վերեւից, մարդկանց (տվյալ դեպքում՝ սպառողին) պարտադրվում եր, թե ի՞նչ պետք է օգտագործի: Հայաստանի ազատ շուկայի արդյունքում մտահոգ պրն Արսենյանը չմոռացավ նաեւ քառզել, որ պետք է սրբորեն կատարել օրենքները ու դրանք չքննարկել, քանի դեռ չեն փոխվել: Ինչ վերաբերում է ադրիմենկյան հայտնի օրենքին, որի արդյունքները «ԳՏ»-ն գնահատում է խիստ վնասակար ՀՀ բյուջեի ու արտադրողի համար, ապա Գ. Արսենյանը դա համարում է «լարյաց փորագույնը», քանի որ հաստատագրված հարկերի մեխանիզմը շատ «որիմիտիվ» է եւ առաջացնում է պետության վարչարարության անկատարությունն ու անճարակությունը: Չնայած իր այս գնահատականներին, որն Արսենյանը, ինչքան էլ փորձեցին պարզել լրագրողները, այդպես էլ չգնահատեց, թե ինքնի՞ն է մաքսային վարչարարությունը Հայաստանում: Փոխարենը հնչեց հանդիսախոսություն: Օրինակ, որ անցյալ տարի Հայաստանում, «երեւի միակը ողջ երկրագնդում», մախանենգությունը եղել է 3 տոկոս, քանի որ «այդ ժամանակ մախանենգությունը տնտեսապես շահութաբեր չեր, ներմուծման եկամուտները 10-12 տոկոս էին կազմում»: «Իսկ այսօր եկամտաբե՞ր է» «Ազգի» հարցին որն Արսենյանը դրական պատասխանեց, դրանով ակամա հաստատելով «ԳՏ»-ի մախանենգության ծավալների աճի մասին հայտարարությունները: Դրա հետ մեկտեղ, սակայն, Գ. Արսենյանը մի քանի անգամ կրկնեց, որ յուրաքանչյուրն իր գործով պետք է զբաղվի, եւ որեւէ մեկի հաստատելն մեղադրանք հնչեցնելը սխալ է, քանի դեռ դատախազությունը չի պարզել դա: Ընդհանրապես, Գ. Արսենյանը լրագրողներին ներկայացավ որպես խիստ օրինապաշտ, օրենքների տառն ու էությունը հարգող, Սահմանադրության վրա երդում կերած քաղաքացի ու բիզնեսմեն: Իսկ երբ այլաբանական գնահատականներից ու ընդհանուր տպավորություններից հետո լրագրողները պնդեցին, այնուամենայնիվ, մի քանի բվեր ասել, տեղեկացվեց հետեւյալը. «Արսոյլը» բազմապրոֆիլ ՀՁ է, զբաղվում է ծխախոտի ներմուծմամբ ու այստեղ արտադրությամբ: Գերմանական «Ռիմաս», GTI ընկերությունների ներկայացուցիչն է այստեղ, ներկրում է «Davidoff», «West», «Camel», «Winston» եւ այդ կարգի այլ սիգարետներ, որոնք կազմում են ծխախոտի ընդհանուր ներմուծումների ընդամենը երեք տոկոսը: Սակայն, դատելով հետագա մեջբերված թվերից, կարելի է ենթադրել, որ այդ երեք տոկոսը շուտով կաճի, «Արսոյլի» գնահատականներով, ներմուծվող սիգարետների ծավալը 3,5 հազարից հասել է 12,5-ի: Ամ այսօր ներմուծողները պետքյուջե են մուծել 258 մլն դրամ, եթե այստեղ շարունակվի, ապա պրն Արսենյանի, գնահատականներով, իրենց ծխախոտատեսակների ներմուծումը կավելանա 4 անգամ, իսկ ամբողջ շուկայում այսօրվա 70-30 տոկոս հարաբերակցությունը հօգուտ «ԳՏ»-ի ու տեղական արտադրողի, կփոխվի, «ներմուծողի համար լավագույն դեպքում» 50-50-ի: Ներմուծողները, ի դեմս պրն Արսենյանի, շահագրգիռ են, որ Հայաստանում ընդունվի հակամենաշնորհային օրենքը, այլապես այն, ինչ կատարվում է մեր երկրում «տնտեսական տոտալիտարիզմ է, որը կարող է փոխվել քաղաքական տոտալիտարիզմի, ինչի արդյունքները մենք տեսել ենք 70 տարի շարունակ»:

Քանի որ նախորդ օրը «ԳՏ»-ի կողմից հայտարարվել եր, որ սիգարետ ներմուծողները անգամ ՀՀ առաջին 50 հարկատուների մեջ չեն, ապա բնական եր հարցնելը, թե ի՞նչ ծավալի հարկեր է վճարում «Արսոյլը» պետությանը: Տեղեկացվեց, որ անցյալ տարվա շրջանառությունը կազմել է 2 մլրդ դրամ, պետքյուջե է մուծվել 350 մլն դրամ: Իհարկե, այս թվերի հրապարակումից հետո ավելորդ եր պրն Արսենյանի ասելը, թե ինքը ոչ առաջին 30 եւ ոչ էլ 50 հարկատուների մեջ է: Ըստ նրա, կարեւորը այդ ցուցակը չէ, «կարեւորը, որ մյուս, ավելի վտանգավոր ցուցակում չեմ», կատակեց նա: «Ես այս երկրի լեգալ ամենահարուստ մարդկանցից մեկն եմ», հպարտությամբ եզրափակեց նա:

Ավելացնենք, որ Գ. Արսենյանը նաեւ «Հայագրոբանկի» խորհրդի նախագահն է եւ իր խմբով, ինչպես խոստացավ ինքը, տնօրինում է այդ բանկի հսկիչ փաթեթը:

ՊԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Ամբողջություն

ԲԱՐՔԵՐ

Գիշերային կանանց դասարկ աչքերը մթնում չեն երեւում

Աշխարհի հնագույն մասնագիտության «զարթոնքը» Հայաստանում

Մարմնավաճառություն

Մարմնավաճառուհիներին անմիջապես կարելի է տարբերել այլ անցորդուհիներից: Նրանք դանդաղ ու ցուցադրաբար ծեմում են փողոցի իրենց մշական տեղի առանցքի շուրջը՝ աննոյաստակ, ինչպես իրենց իսկ կյանքն է, հոգնած դեմքերին՝ առաստղար, մաշված մարմիններին՝ հագուստի բացակայություն հիշեցնող հագուստ, դասարկ ու որսացող աչքերով կանայք...

Մարմնավաճառության ծեւավորված դատակարգումներից չբեղվելով՝ Հայաստանում էլ մարմնավաճառ կանայք բաժանվում են 4 խմբի՝ էլիտար, միջին կարգի, փողոցային եւ արտագնա (վերջինը ներառում է առաջին 3 խմբերը): Առաջիններին մեկանգամյա ծառայությունը բավականին բանկ արժե՝ 50-200 դոլար: Իրենք՝ այս խմբի կանայք էլ համադասասխանում են «էլիտար» անվանմանը. նրանց տարիքը չորսի գերազանցի 35-ը, նրանք կրթված են, ապրում են բարվոք կենսապայմաններում եւ իրենց այցելուներին ընտրում գործարար ոլորտից ու արտասահմանյան հաղաքացիներից: Հայաստանում «էլիտարների» թիվը ներկայումս գերազանցում է 200-ը: Միջին կարգի մարմնավաճառների տարիքը կարող է հասնել մինչեւ 40, իսկ «ծառայությունն» արժե 30-60 դոլար. այդտիսիք գործում են կավատների միջնորդությամբ: Մեզ մոտ նրանց թիվն ավելի քան 500 է: Մարմնավաճառների ամենացածրակարգ տեսակը «փողոցային» կոչվող կանայք են, որոնց տարիքը կարող է 50-ի էլ հասնել, իսկ «վարձը» սկսվում է 50 դոլարից մինչ... Անհաջող «որսի» պայմաններում գինը կարող է իջնել նաեւ 5 դոլարի եւ ավելի ցածր:

Նրանց կարելի է հանդիպել բոլոր օրերին. մթնշաղն ընկնելուն պես եւ գրեթե մինչեւ լուսաբաց: Հասցեները տարբեր են. սակայն Երեւանում նրանք նախընտրում են հատկապես Ամիրյան փողոցը. Մաշտոցի եւ Բաղրամյան պողոտաները... Սա գովազդային հայտարարություն չէ. իսկ հանելուկ լինելու համար չափից դուրս պարզունակ է: Որովհետեւ բոլորն անմիջապես կռահում են. թե ում մասին է խոսքը...

Աշխարհի հնագույն մասնագիտություններից մեկը որպես զուտ աշխատանք ընկալելը հոգեբանորեն դժվար է՝ ո՛ր երկրում էլ բնակվես, էլ ո՞ւր մնաց մեզ՝ արեւելյան մտածողությամբ առաջնորդվողներիս համար: Այս հակասության պատճառով էլ ունենք այն, ինչ ունենք. մի կողմից՝ ազգային ընտանեկան ավանդույթների եւ հայ կնոջ կերպարի վերաբերյալ բարձրահունչ ու զուտ տեսական հորջորջումները, մյուս կողմից՝ մարմնավաճառության շարունակական տարածման փաստը: Իսկ փաստերից չես խուսափի. արդեն ոչ մեկիս համար էլ գաղտնիք չէ, որ մարմնավաճառ հայուհիները «մասնագիտական» բարձր վարկանիշ ունեն Արաբական Միացյալ էմիրություններում (մասնավորապես՝ Դուբայում), Թուրքիայում, «գործունեություն» են ծավալել նաեւ Մ. Նահանգներում, Գերմանիայում...

Մարմնավաճառությունը Հայաստանի օրենքներով քրեորեն հետապնդվում է, իսկ մարմնավաճառները դրամական տուգանք են վճարում՝ «բռնվելու» դեպքում ենթարկվելով նաեւ անվճար բժշկական սուգման: Հաճախ իրենց՝ վեներական հիվանդ լինելը կամ չլինելը պարզելու նպատակով նրանք դիտավորյալ չեն խուսափում իրավապահների հետ հանդիպումից եւ «ձեռի հետ» ձի սուգվում են:

Մարմնավաճառ կանանց հանդեպ անհանդուրժողականությունը հավանաբար մեզ թույլ չի տալիս նրանց մեջ տեսնել ծախողված ճակատագիր: Այդ կանանց մի մասին մարմնավաճառության են դրդել ծանր կենսապայմանները ու անելանելիությունը, գործազրկությունը, չկայացած ընտանիքն ու այլեւայլ հիասթափությունները. նմանօրինակ պատճառաբանություններից ու խոստովանություններից մի քանիսի անմիջական ունկնդիրը դարձա: Թեպետ պետք չէ անտեսել նաեւ հոգեբանների որոշ մասի կարծիքը, որի համաձայն՝ մարմնավաճառությամբ զբաղվելը միշտ չի պատճառաբանվում սոցիալական ու ֆինանսական գործոններով, այլ երբեմն պարզապես բնությամբ թելադրված պահանջմունք է: Հակառակ դեպքում ինչպե՞ս բացատրել, որ նույնպիսի կենսապայմաններում ապրող երկու կանանցից մեկը որպես ճանապարհ է ընտրում մարմնավաճառությունը, իսկ մյուսը՝ ոչ:

Կավատություն

Շուկայական հարաբերությունների եւ արտաքին առեւտրի զարգացումն իր յուրատեսակ ազդեցությունն ունեցավ նաեւ մարմնավաճառության գործի (ի դեպ, բավականին եկամտաբեր) «կատարելագործման» վրա: «Շնորհիվ» տեղացի ձեռներեցների, որոնք ճանապարհ հարթեցին դեպի արաբական երկրներ եւ Թուրքիա, հայ մարմնավաճառները վերջին վեց տարիներին շահութաբեր հանգրվան են գտել հատկապես այդ երկրներում:

Եթե մարմնավաճառ կանանց մասին խոսելիս ցավ ու խղճահարություն ես զգում նրանց գիտակցված կամ չգիտակցված ողբերգության՝ անապագա կյանքի համար, ապա կավատների դեպքում մոտեցումն այլ է: Անգամ չվաճառելով իրեն՝ կավատն առավել է համադասասխանում «անբարոյական» որակմանը, քան ցանկացած մարմնավաճառ:

Նշ համակարգում արձանագրված են տասնյակ դեպքեր՝ քրեորեն հետապնդելի, երբ «ընկերական» օգնության կամ գործարքի անվան տակ կավատն աղջիկներին ապատան է տալիս իր տանը, այնուհետեւ սիրելով վարձահատույց լինել մարմնավաճառությամբ:

Տասնյակ փաստեր կան, երբ կավատները, թաքցնելով կամ չթաքցնելով իրենց ինքնությունը, երիտասարդ կանանց գայթակղել են արաբական երկրներում օրինավոր աշխատանքով ապահովելու առաջարկով, հաճախ էլ գայթակղել են՝ մարմնավաճառության ոսկեբեր հեռանկարները պատկերելով: Դյուրահավատ աղջիկները կամ մարմնավաճառները, կավատի հոգացած ճանապարհածախսով, ուղեւորվում են, ասենք, Դուբայ: Եվ տեղում պարտքերը փակելու եղանակը մեկն է՝ անընդհատ, մաշող «աշխատանք»: Հետաքրքիր կավատներն՝ աղջիկների հնարավոր փախուստը կանխելու նպատակով, նրանց զրկում են անձնագրից: Աղջիկների սկզբնական «արժեքը» 300-500 դոլար է: Հետագա շահույթը հայաստանցի կավատը կիսում է տվյալ երկրի իր գործընկերոջ հետ:

Իսկ հիմա պատկերացրեք արաբական հյուրանոցներում ապաստանած մեր կանանց, որոնց «այցելուների» թիվն ամեն օր 20-ից պակաս չէ: Եվ ամեն օրվա ավարտին կավատը տիրանում է նրա վաստակած գրեթե ողջ գումարին, իսկ եթե զոհը դժգոհում է, թե կհեռանա, կավատն անմիջապես դիմում է նրա անձնագիրն այրելու սպառնալիքին: Այս դժոխային գործարքը շարունակվում է այնքան, քանի դեռ մարմնավաճառը չի կալանավորվել: Նրանց թիվն այսօր Արաբական էմիրություններում հասնում է 500-ի, եւ նրանք կավատների կողմից պարբերաբար ենթարկվում են բռնությունների ու նվաստացման: Ինչ վերաբերում է կավատներին, ապա նրանք, Հայաստանի իշխանությունների եւ Ինտերպոլի տեսադաշտում գտնվելով էլ, շարունակում են օրվա եկամուտը շորթել արաբական երկրներում, միաժամանակ հիանալի գիտակցում են, որ վաղ թե ուշ իրենց մնալու ժամկետը սպառվելու է եւ պիտի վերադառնան Հայաստան, ուր իրենց սպասում է քրեական պատասխանատվությունը: Իսկ մինչ այդ...

Իսկ մինչ այդ նրանք գերին են իրենց ագահության: Նրանց զոհը դարձած մարմնավաճառ կանայք էլ իրենց ճակատագրի գերին են: Ո՞վ գիտի, թե հանգամանքների այլ դասավորության դեպքում ինչ ուղիով կընթանար յուրաքանչյուրիս կյանքը. այնպես որ՝ չդատենք, որպեսզի չդատվենք: Սակայն գրեթե հոետորական մի հարց այնուամենայնիվ ուզում ես ուղղել՝ մի՞թե այլ կերպ հնարավոր չէր եւ արդեն այլ փրկություն չկար...

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Բրիտանացիների անհավանական արարքները Հայաստանում

Կամ թե ինչպե՞ս է լինում, երբ փաստերը աղավաղվում են

Պատասխանի իրավունքով ստորեւ որոշ հարավումներով հրապարակում ենք «Հրատարակչություն Փյունիկ» ՍՊԸ իրավաբանի նամակը, որը վերաբերում է «Ազգ»-ի հունիսի 17-ի համարում լույս տեսած Գայանե Մուրոյանի «Բրիտանացիների անհավանական արկածները Հայաստանում» հոդվածին, որտեղ ներկայացվել էին «Փյունիկ-Մակմիլան» ՓԲԸ ներկայացուցչի տեսակետները երկու կազմակերպությունների միջեւ առկա դատական վեճի վերաբերյալ: Հարկ ենք համարում հիշեցնել, որ մեր աշխատակիցը հոդվածի վերջում պատրաստակամություն էր հայտնել հրապարակելու նաեւ «Հրատարակչություն Փյունիկ» ՍՊԸ հիմնադիր Լեւոն Մկրյանի տեսակետները:

Հայաստանում 1997 թ. գրանցված առաջին հրատարակչական համատեղ ձեռնարկությունը՝ «Փյունիկ-Մակմիլան» փակ բաժնետիրական ընկերությունը, իրոք կարճ ժամանակում ակնառու հաջողություններ ունեցավ Համաշխարհային բանկի «Հայաստանի դպրոցական դասագրքեր» հայտահրավերի մրցույթում: Սակայն ՀԲ վարկային ծրագրերով ֆինանսավորվող կազմակերպությանը արտասահմանյան ուղղակի ներդրումներ կատարող ընկերությունների հետ շփոթելը, հայ եւ բրիտանական բաժնետերերի միջեւ վիճաբանական իրավիճակը քաղաքական դեմագոգիայի վերածելով՝ Հայաստանին տնտեսական պատժամիջոցների սպառնալիքներ ներկայացնելը, եթե ինչ-որ տեղ հասկանալի է համատեղ ձեռնարկության բրիտանական կողմի ղեկավարության շրջանակներին, բացարձակապես պատշաճ չէ ազատ լրագրողի գրչին: Կարծում եմ, «Փյունիկ-Մակմիլան» ՓԲԸ ներկա տնօրեն Ալլա Հարությունյանի հետ «բովանդակալից» զրույցից հետո լրագրողն ուղղակի պարտավոր էր ծանոթանալ նույն ձեռնարկության բաժնետեր հանդիսացող «Հրատարակչատուն Փյունիկ» ՍՊԸ հիմնադիր, Հայաստանի առաջին մասնավոր հրատարակիչներից մեկի՝ Լեւոն Մկրյանի մեկնաբանություններին: Մանավանդ որ նա է հայ-բրիտանական ձեռնարկության կոնֆլիկտային իրավիճակի առանցքը, նրա դեմ է հարուցված մոտ երկու տարի ոչ մի կերպ չադարացվող քրեական մեղադրանքը, նրա իրավունքներն են ամեն առիթով խախտում «Մակմիլան էդուքեյշն» ընկերության ներկայացուցիչները: Մանավանդ նաեւ, որ նրա տասը տարիների ստեղծագործական ձեռքբերումների արդյունքներն են, որ բրիտանական «ներդնողները» ամեն գնով ձգտում մենաշնորհել՝ սեփականացնելով եւ դուրս բերելով Հայաստանից ոչ միայն ՀԲ վարկի գումարները, այլեւ հայկական դպրոցի շուրջ 40 դասագրքերի հրատարակչական իրավունքը:

Իմիջիայլոց, ներքին հպարտությամբ հաճախ կրկնելով, որ հայերիս հիմնական հարստությունը մեր ինտելեկտուալ ներուժն է, մենք ամեն անգամ խոնարհվում ենք հզոր արտարժույթի առջեւ: «Անգլիական կողմը կատարել է նյութական ներդրում, իսկ հայկականը՝ միայն իր հեղինակային իրավունքն ու ինտելեկտը», մեջբերում է Գայանե Մուրոյանը՝ Ալլա Հարությունյանի եւ նրա համախոհների հետ միասին, մոռանալով, որ համատեղ ձեռնարկության հպարտության առարկան հանդիսացող շուրջ 40 դպրոցական դասագրքերը ոչ թե բրիտանական գումարների, այլ հայկական ինտելեկտի ծնունդն են ու արդյունքը:

Հարգելի լրագրող, սկսենք Ձեր հոդվածի առանցքը հանդիսացող «արտասահմանյան ներդնող» գաղափարից, որը բացարձակապես ոչ մի կապ չունի բրիտանական «Մակմիլան էդուքեյշն» ընկերության հայաստանյան գործունեության հետ: Այդ ընկերությունը Հայաստան է մտել Համաշխարհային բանկի հայկական դպրոցական դասագրքերի հրատարակության վարկային ծրագրի նախաբեմին եւ, բնականաբար, «սպառնում» է Հայաստանից հեռանալ, քանի որ գալիք տարի ավարտվում է այդ ծրագրի ֆինանսավորումը: Ինչ վերաբերում է Ձեր հայտարարած 1 միլիոն 850 հազար ԱՄՆ դոլար ներդրումային գումարին, ապա այն, կարծում եմ, նույնքան ճիշտ է, որքան այդ ցուցանիշը Ձեզ տրամադրած Ալլա Հարությունյանի պատասխանը՝ Մակմիլանի «տարածաշրջանային տնօրեն»: Գուցե փոխելով «տնօրեն» եւ «ներկայացուցիչ» բառերը, նա փոխում է նաեւ ներդրում եւ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծախսեր հասկացությունները, կամ գուցե մեր երկրի տնտեսության համար փրկարար է համարում Մակմիլանի բրիտանական պահեստներում դեղնած գրքերի մեծաքանակ ներկրումը Հայաստան՝ իրացման ապարդյուն հույսերով:

Ինչ վերաբերում է Լեւոն Մկրյանի դեմ հարուցված քրեական գործից Ձեր մեջբերումներին, ապա դրանք էլ խեղաթյուրված են: Լեւոն Մկրյանը քննության ոչ մի փուլում եւ ոչ մի կերպ չի ընդունել իր մեղավորությունը, ինչպես Դուք եք գրում, իսկ նրա նկատմամբ հարուցված մեղադրանքներից մեկն էլ ոչ թե առանց արտոնագրի ձեռնարկատիրական, այլ բանկային գործունեությամբ զբաղվելն է: Այնպես որ, նրա բոլոր «պարտատերերը» ավանդատուներ են, որոնք իրենց ներդրումներով տարիներ շարունակ ապահովել են նրա գրահրատարակչական գործունեությունը եւ դիվիդենտներ ստացել:

Իսկ բրիտանական կողմին առաջարկել իր բաժնեմասը, ինչպես Դուք եք գրում, Լեւոն Մկրյանը չէր կարող, այն պարզ պատճառով, որ նա համատեղ ձեռնարկությունում բաժնեմաս չունի: «Փյունիկ-Մակմիլան» ՓԲ Ընկերության հայկական բաժնետերն է «Հրատարակչատուն Փյունիկ» ՍՊ Ընկերությունը: Այնուամենայնիվ, Ձեզ հավատացրել են, որ Լեւոն Մկրյանի եւ «Մակմիլան էդուքեյշն» ընկերության գործադիր տնօրեն Քրիստոֆեր Հարիսոնի միջեւ 1998 թ. հոկտեմբերի 28-ին ստորագրվել է հայկական կողմի բաժնետոմսերի 28 տոկոսը բրիտանական կողմին վաճառելու մասին պայմանագիր, որը նոտարական վավերացում չի ստացել Լ. Մկրյանի ծերբակալության պատճառով: Եթե Դուք փորձ-ինչ ծանոթացած լինեիք դատաքննության նյութերին, կհամոզվեիք, որ նույնիսկ Ալլա Հարությունյանի խոստովանությամբ այդ անհեթեթ պայմանագրի ստորագրման պահին Քրիստոֆեր Հարիսոնը գտնվել է Անգլիայում, մի բան, որ լիովին բացառում է երեւանում որեւէ փաստաթուղթ ստորագրելու նրա հնարավորությունը: Ի դեպ, Լեւոն Մկրյանը այդ օրվանից 51 օր հետո է միայն ձերբակալվել, իսկ դա, կարծում եմ, բավարար ժամկետ էր վավերացնելու համար բրիտանական կողմի համար ցանկալի այդ պայմանագիրը, եթե այն իրոք գոյություն ունենար: Այնուամենայնիվ, անհասկանալի է նաեւ, թե ի՞նչ թվաբանական սկզբունքով եք հաշվարկել հայկական կողմի նախնական 30 տոկոս բաժնեմասից 28 տոկոսը բրիտանական կողմին անցնելուց հետո 0,6 տոկոսի մնացորդը: Թե՞ այստեղ էլ է իր դերը խաղացել Ալլա Հարությունյանի «Ինչ ուզեմ՝ կանեմ» նշանաբանը: Զարմանալի ճկունությամբ համատեղելով «Մակմիլան էդուքեյշն» բրիտանական ընկերության ներկայացուցչի եւ «Փյունիկ-Մակմիլան» գործադիր տնօրենի պաշտոնները, Ալլա Հարությունյանը, սակայն, եղել է նույն ընկերության ֆինանսական տնօրենը, երբ Լեւոն Մկրյանը «կատարել է մի շարք խախտումներ եւ չարաշահումներ»: Այդ ինչպե՞ս էր աշխատում բրիտանական ներկայացուցիչը, որ տեղյակ չէր ոչնչից: Մի՞թե նրա միակ գործը «Հրատարակչատուն Փյունիկ» բաժնետիրոջը՝ ի դեմս Լեւոն Մկրյանի, համատեղ ձեռնարկությունից դուրս մղելն էր: Զարմանալի չէ, որ հրատարակչական կարիերան որդեգրելով՝ ուղեբեռների փոխադրման ընկերության նախկին աշխատակցուհին դժվարանալու էր հանդուրժել Լեւոն Մկրյանի պրոֆեսիոնալիզմը եւ գրահրատարակչական ասպարեզում ունեցած հեղինակությունը: Սակայն ի՞նչ կարեւոր են այդ չափանիշները:

Անդրադառնանք աուդիտին: Աուդիտը նշանակված է ոչ թե Լեւոն Մկրյանի, այլ դասարանի որոշումով: Իսկ դրանք բացարձակապես տարբեր բաներ են: Դուք չպետք է զարմանաք, որ Ձեզ չի հաջողվել աուդիտորներից որեւէ տեղեկություններ ստանալ: Չէ՞ որ նրանք հաշվետու են միայն դասարանին:

Բավական է օրենքի չիմացության պատճառով անտեղի զարմանալ եւ զայրանալ, ինչպես զարմանում եւ զայրանում է «Մակմիլան» ընկերությունը «այն փաստից, որ բացահայտ մեղավոր մարդը այս երկրում կարող է երկար ժամանակով խուսափել պատասխանատվությունից»: Այստեղ արդեն մե՛նք կարող ենք զարմանալ, թե ինչպե՞ս ժողովրդավար բրիտանացիները ծանոթ չեն մարդու իրավունքների հիմնադրույթներից մեկին՝ անմեղության կանխավարկածին եւ Լեւոն Մկրյանի հանդեպ իրենց վրա են վերցնում Հայաստանի դասարանի իրավասությունները:

Հարգելի լրագրող, ես, իբրեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, խնդրում եմ Ձեզ չկրկնել բրիտանական ներկայացուցիչների այն սպառնալիքները, թե ներդնող «Մակմիլանը» կհեռանա Հայաստանից: Թո՛ղ հեռանա: Ազնիվ փոխշահավետության սկզբունքներով իրական ներդրումներ կատարող գործարարներին այդ ցուցադրական քայլը չի կանգնեցնի: Մենք էլ մեզ գոնե մեկ դրվագով պակաս վաճառված կզգանք եւ արժանապատվությամբ կնայենք մեր երեխաների աչքերին:

ԿԱՐԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ
«Հրատարակչատուն Փյունիկ» ՍՊԸ իրավաբան. լիազոր ներկայացուցիչ

ԱՆՑՅԱԼԻ ԷՋԵՐԻՑ

Կիսաս-ղռաս գիտելիքներով բանի չես հասնի

1990 թ. սեպտեմբերին, լիազորությունները վայր դնելուց անմիջապես առաջ, AIM-ին տված բացառիկ հարցազրույցում Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դոմեջյանն անկեղծորեն խոսում էր պաշտոնավարության տարիների մասին:

– Չե՞ք պատրաստվում պաշտոն սանձնել կառավարությունում:

– Ոչ: 28 տարի աշխատում եմ: Այժմ էլ ուզում եմ ինքս ինձ համար ապրել, լինել պարզապես ակտիվ քաղաքացի եւ ոչ թե նորից պաշտոնավարել:

– Ինչպե՞ս էին ձեզ վերաբերվում լրատվության միջոցները:

– Հայկական մամուլը ոչ միայն արդարացի էր, այլեւ շատ բարյացակամ եւ նույնիսկ օժանդակում էր ինձ: Երանի ոչ հայկական լրատվամիջոցներն էլ այդքան բարի լինեին իմ հանդեպ: Հայկական լրատվամիջոցներն ուղղակի հիանալի էին:

– Նախագահ Բուշը մեղադրվեց նախընտրական խոստումները խախտելու մեջ. նա ոչինչ չարեց ցեղասպանությունը ճանաչելու ուղղությամբ: Ինչպե՞ս դա ընդունեցիք:

– Ես հուսախաբված էի. վարչակազմը պաշտոնապես մերժում էր ցեղասպանությունը: Պատճառները նույնն են, ինչ այժմ: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է եւ ԱՄՆ-ի դաշնակիցը, Թուրքիան կնեղանա: Իսկ Թուրքիան, ինչպես գիտեք, ճնշում է գործադրում Կոնգրեսի եւ վարչակազմի վրա՝ արգելելով եղեռնի ճանաչումը հսկայական գումարներ է ծախսում, որոնց մեծ մասն ԱՄՆ-ն է տրամադրում:

– Խրախուսո՞ւմ եք այն ամերիկահայերին, որոնք ձգտում են կառավարությունում պաշտոններ ստանալ:

– Այո, իհարկե: Հույս ունեմ, որ ուզում եմ հարթել նրանց համար, ապացուցել եմ, որ եթե իրոք հետաքրքրվում ես քաղաքականությամբ, բազմաթիվ հնարավորություններ կան քո առաջ: Նաեւ կուզենայի, որ Կալիֆոռնիայի հայ համայնքը եւ ողջ ամերիկահայերն իմանան, որ երբ օգնեցին ինձ նահանգապետ ընտրվելու, օգնեցին նաեւ մյուսներին, որոնք ապագայում կմտնեն կառավարություն:

– Ի՞նչ խորհուրդ կտաք ԱՄՆ նոր եկող հայերին:

– Կբացատրեմ այն հնարավորություններն ու առավելությունները, որոնք այս երկիրը տրամադրում է նրանց, բայց նրանք էլ պիտի լավ աշխատեն այս երկրի համար: Նրանք նաեւ պիտի գիտակցեն, որ բարձր տեխնոլոգիաների այս դարում լավ կրթության կարիք ունեն: Կիսաս-ղռաս մասնագետներն առանց լիարժեք կրթության դատապարտված են հասարակության ամենացածր աստիճանին մնալու:

AIM
Մարտ, 2000

Իրանը փորձում է այլընտրանքային ՄԱԿ ստեղծել

«Վաշինգտոն փոստ» ամերիկյան օրաթերթի թղթակիցն օրերս այցելելով Իրանի տարածքի 12 հատվածներ, որոնք վերջին շրջանում ռմբահարվել են ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ռազմաօդային ուժերի (ՌՕՈՒ) կողմից, գրում է. «Շատ եւ շատ դեպքերում ռմբահարվում են ազատ տարածությունները, դաշտերը, արոտավայրերը, որտեղ չկան ռազմական բազաներ: Օդային հարձակումների զոհ են դառնում իրանցի երեխաները, որոնք դաշտերում ոչխար են արածեցնում»:

Ըստ պաշտոնական տվյալների, վերջին մեկուկես տարիներին ռմբահարումների հետեւանքով սպանվել է 300 իրանցի, որից 200-ը խաղաղ բնակիչ, շուրջ 800 մարդ սպացել են ծանր վնասվածքներ: Ու թեեւ համաշխարհային ԶԼՍ-ներն անտեսում են ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի բարբարոսությունները (այս երկու երկրների մամուլը շատ հազվադեպ է անդրադառնում Իրանին, եթե անդրադառնում է, ապա միայն Սադդամ Հուսեյնին ճնշադատելու համար), չկա մեկ շաբաթ, որ չռմբահարվի Իրանի տարածքը պատրվակ բերելով մեկ երկրի հյուսիսում բնակվող քրդերի դեմ շարունակվող «կոտորածները», մեկ հարավի շիաների խնդիրը, մեկ ՄԱԿ-ի փորձագետների աշխատանքները խոչընդոտելը: 1990 թ. ավարտված «Փոթորիկն անապատում» գործողությունից հետո, երբ ստեղծվեց հյուսիսի «թռիչքազերծ գոտին», ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ՌՕՈՒ-ն 280 հազար ռազմական թռիչք է կատարել:

Պաշտոնական Բաղդադը, անտեսելով Արեւմուտքի շարունակվող քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցները, փորձում է տարածաշրջանում նոր դաշնակիցներ գտնել, ամրապնդել կապերը հին դաշնակիցների հետ: Այս առումով Իրանն աշխույժ էր անցնող շաբաթ: Երկրի առաջին փոխարտգործնախարար Նուրի Իսմայիլ ալ Վայսը Դուբայում տնտեսական երկկողմ համագործակցության շուրջ բանակցություններ է վարել Տաջիկստանի վարչապետ Ակիլ Ակիլովի եւ արտգործնախարար Տալբակ Նազարովի հետ: Խոսակցության հիմնական թեմա է եղել իրանյան նավթի արտահանումն ու դրա դիմաց սպասվող մարդասիրական օգնությունը՝ սնունդ, դեղորայք:

Կիրակի Սիրիայի նոր առաջնորդ Բաշար Ասադը Դամասկոսում բանակցություններ է վարել Իրանի արտգործնախարար Մուհամեդ Սաիդ Սահաֆի հետ: Իրանի եւ Սիրիայի հարաբերությունները խզվել էին 70-ական թթ. վերջերին, երբ Դամասկոսը իրանա-իրաքյան պատերազմում պաշտպանեց Թեհրանին:

Անցած շաբաթ Մոսկվա ժամանեց Սադդամ Հուսեյնի ավագ խորհրդական Համիդ Յուսեֆ Համադին: Նա մեկ անգամ եւս հիշեցրեց Իրանի ժողովրդի անասելի թշվառությունները, ապա ներկայացրեց այցելության բուն նպատակը. ստեղծել միջազգային կազմակերպություն՝ այլընտրանքային ՄԱԿ, որի անդամ երկրների ներքին խնդիրներին իրավունք չեն ունենա խառնվել ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, չեն կիրառվի արգելքներ եւ տնտեսական շրջափակում, անդամ երկրները պետք է ամրապնդեն տնտեսական կապերը: Իրանը Ռուսաստանին առաջարկել է անդամակցել դեռեւս չստեղծված կազմակերպությանը:

Եվ վերջապես, անցած շաբաթ, Բաղդադում բացվեց Հայաստանի ներկայացուցչությունը: Չի բացառվում, որ մոտ ապագայում հայ-իրաքյան հարաբերությունները բարձրացվեն դեսպանների մակարդակի:

Ռ. Հ.

Սիրիայի նախագահական հանրաքվեն՝ հուլիսի 10-ին

Երկօրյա քննարկումներից հետո, հունիսի 27-ին սիրիական խորհրդարանը միաձայն ընդունեց գոկտոր Բաշար Ասադի թեկնածությունը երկրի նախագահության համար: Խորհրդարանի նախագահ Աբդուլ-Կադեր Կադուրան հայտարարեց, որ հուլիսի 10-ին անցկացվելու է հանրաքվե Սիրիայի նոր նախագահ ընտրելու համար: Այնուհետեւ գեներալ Բաշար Ասադը տալու է սահմանադրական երդում՝ դառնալով երկրի նախագահ: Հիշեցնենք, որ հունիսի 10-ին, նախկին նախագահ Հաֆեզ Ասադի վախճանից հետո, իշխող «Բաաս» կուսակցությունն առաջադրել էր գոկտոր Բաշարի թեկնածությունը: Նա վայելում է նաեւ բանակի աջակցությունը, որի գլխավոր հրամանատար նշանակվեց հունիսի 11-ին:

Ա. Մ.

Բանկային գաղտնիքի առասպելը

Երբ խոսում են բանկային գաղտնիքի մասին, առաջին հերթին նկատի են առնվում Շվեյցարիան, Լյուքսեմբուրգը, ինչպես նաեւ որոշ գաճաճ պետություններ: Շվեյցարացի պաշտոնատարները պնդում են, թե իրենց երկրում բանկային գաղտնիքը հաստատվել է նացիզմի ժամանակաշրջանում՝ իբր հետապնդումների զոհերի շահերի պաշտպանության նպատակով: Սակայն Բեռնի համալսարանի պատմության ինստիտուտի աշխատակից Պետեր Հուգը վերջերս ապացուցեց, որ այդ բացատրությունն իսկական առասպել է, որն ստեղծվել է 1960-ական թթ. ԱՄՆ-ում, մասնավորապես այդ երկրի հրեական համայնքում բանկային գաղտնիքի իբր հականացիստական բնույթի վկայակոչումով Շվեյցարիայի դրական նկարագիր կերտելու նպատակով: Ամենազարմանալին այն է, որ նույնիսկ բանկային գաղտնիքի հակառակորդները, ներառյալ գրող եւ սոցիալիստ պատգամավոր Ժան Զիգլերը, հավատացել են այդ առասպելին:

Իրականում Շվեյցարիայի բանկային գործունեությունը գաղտնիացվեց 1932 թ., երբ Փարիզում ծերբակալվեց Բեռնի բանկերից մեկի տնօրենը եւ բռնագրավվեց դրա 2000 ֆրանսիացի հաճախորդների ցանկը, որոնց մեջ էին երկու եղիսկոպոս, բազմաթիվ կարդինալներ եւ «Պեժո» ավտոմոբիլային կոնցեռնի նախագահը: Այսպիսով, Շվեյցարիայում բանկային գաղտնիքն սկսեց գործել այն պահին, երբ Գերմանիայում Հիտլերը դեռ չէր անցել իշխանության գլուխ, ուստի խոսք անգամ լինել չի կարող «նացիզմի զոհերի շահերի պաշտպանության» մասին:

Ինչ վերաբերում է Լյուքսեմբուրգին, այդ երկրում բանկային գաղտնիքի օրինականությունն էլ ավելի անհիմն է թվում: 1981 թ. ապրիլի 23-ի բանկային օրենքի ընդունումից առաջ այնտեղ ուժի մեջ էր մասնագիտական գաղտնիքի օրենքը, որը վերաբերում էր մասնավորապես բժիշկներին, փաստաբաններին, դեղագործներին եւ մանկաբարձներին: «Պուեն» հանդեսը նշում է, որ Լյուքսեմբուրգի ֆինանսական համակարգի զարգացումն էր միայն, որ բանկերը դարձրեց հարաճուն գործառնությունների պարտադիր կենտրոն եւ յուրօրինակ «խորհրդապահական կետ»:

Եվրամիության շրջանում վերջերս տարածայնություններ են ծագել բանկային նպատակահարմարության հարցում: Մեծ Բրիտանիան կտրականապես դեմ է այս ոլորտում տեղեկատվության փոխանակմանը: Ավստրիան, Բելգիան, Հունաստանը եւ Լյուքսեմբուրգը մասամբ ընդդիմանում են բանկային հաշիվների աղբյուրների բացահայտմանը: Մյուս երկրներն էլ համառորեն որոնում են ուրիշ լուծումներ:

Պ. Բ.

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանն ու Բելառուսը ձգտում են արտաքին քաղաքականության համակարգման



ՄՈՍԿՎԱ, 28 ՅՈՒՆԻՍ, ՄՆԱՐՔ: Ռուսաստանն ու Բելառուսը ձգտում են իրենց գործունեության համակարգման արտաքին քաղաքականության ոլորտում: Այդ մասին հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը երկու երկրների Պետխորհրդի նիստի ավարտից հետո կայացած մամլո ասուլիսում: «Մեր կարծիքով, այդ համակարգումը հաջող է ընթանում եւ օգտակար է ինչպես Բելառուսի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության համար», նշել է Ռուսաստանի նախագահը: Բացի այդ հարցից, Վ. Պուտինի ասելով, նիստի ընթացքում քննարկվել են միասնական տնտեսական դաշտի ու միասնական մաքսային տարածքի ստեղծմանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ միության առաջնահերթ խնդիրների ֆինանսավորման հարցը:

«Մեդիա-Մոստի» Մալաշենկոյին Մոսկվայից դուրս չեն թողնում

ՄՈՍԿՎԱ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «Մեդիա-Մոստ» հոլդինգի ղեկավարներից մեկին՝ Իգոր Մալաշենկոյին արգելված է մեկնել Մոսկվայից Չալցբուրգ՝ միջազգային տնտեսական խորհրդաժողովի: Հոլդինգի պատվիրակությունը Մալաշենկոյի գլխավորությամբ արդեն գտնվում էր ինքնաթիռում, երբ մտել են սահմանապահները եւ Մալաշենկոյին հաղորդվել է, որ նրան ժամանակավորապես չի թույլատրվում երկրից մեկնել: Ի նշան բողոքի «Մեդիա Մոստի» ողջ պատվիրակությունը մնացել է «Վնուկովո-1» օդանավակայանում: Մալաշենկոն կասեցված անվանել է հարձակում մամուլի ազատության դեմ: Սպասվում է, որ մոտ ժամանակներս ինքնաթիռը պատվիրակության հետ համենայն դեպս կմեկնի Չալցբուրգ:

Նազարբաեւը՝ ցմահ անձեռնմխելի

ԱՍՏԱՆԱ, 28 ՅՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը դարձավ «ժողովրդի առաջնորդ»: Հունիսի 27-ին Ղազախստանի խորհրդարանն ընդունել է օրենք առաջին նախագահի եւ նրա ցմահ իրավունքների մասին: Ղազախստանի առաջին նախագահն ունի ցմահ իրավունք դիմելու ժողովրդին, պետական մարմիններին եւ պաշտոնատար անձանց՝ երկրի համար կենսական կարեւորություն ունեցող հարցերին առնչվող նախաձեռնություններով, ելույթ ունենալու խորհրդարանի առջեւ եւ կառավարության նիստերում, մտնելու Անվտանգության խորհուրդ եւ գլխավորելու Ղազախստանի ժողովուրդների վեհաժողովը: Նախագահը կօգտվի ցմահ անձեռնմխելիության իրավունքից: Խորհրդարանը որոշել է Ն. Նազարբաեւին իրավունք չվերապահել դիմելու ապագա նախագահին՝ կադրային հարցերին, արտակարգ դրություն մտցնելուն, պատերազմի ու խաղաղության հարցերին առնչվող առաջարկություններով:

ՊԱՏԺԱՄՐՑՈՏՆԵՐ

«Ավստրիան չի հարգում համաեվրոպական արժեքները»

ՎԻԵՆՆԱ, 28 ՅՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: ԵՄ գծով Ավստրիայի գործընկեր երկրները որոշել են ուժի մեջ թողնել այդ երկրի դեմ կիրառվող պատժամիջոցները, քանի որ Ավստրիայի կառավարությունը հարկ եղած հարգանք չի տածում համաեվրոպական արժեքների նկատմամբ: Բելգիայի արտգործնախարար Լ. Միշելը հունիսի 27-ին հայտարարել է, որ ԵՄ անդամ երկրները հասել են հիմնական համաձայնության այդ հարցի շուրջ: Պատժամիջոցները կպահպանվեն այնքան ժամանակ, քանի դեռ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացուցիչները չեն ներկայացրել Ավստրիայի իրադրության վերաբերյալ իրենց զեկույցը, որն առնչվում է փախստականների, գաղթականների եւ ազգային փոքրամասնությունների, ինչպես նաեւ Ազատության կուսակցության քաղաքականության նկատմամբ ավստրիացիների վերաբերմունքին: Պորտուգալիայի կառավարությունն առաջարկել է ստեղծել խորհրդատվական խումբ, որը կհետաքննի մարդու իրավունքների առնչությամբ Ավստրիայում առկա իրադրությունը, այնուհետեւ հանձնարարականներ կներկայացնի ԵՄ անդամներին՝ պատժամիջոցները վերացնելու հարցը լուծելու համար: Բելգիայի կառավարությունը, որն առավել հետեւողականորեն էր հանդես գալիս պատժամիջոցների օգտին, արդեն նախնական համաձայնություն է տվել նման խմբի ստեղծմանը:

ԱԶԳ

Մշակույթ

Շարանցոնում (Բերսի, Փարիզ) խառահարկ գեղեցիկ մի շինություն կա, նախկին ի-ջեւանատեղի, ուր ամեն տարի 3-4 ամիս ժամանակով տեղավորվում են Նարեկ Դուրյանի ղեկավարած թատերախմբի արտիստները: Հայաստանից հրավիրված Փիրուզա Խալաթյանը, Արտաշես Ոսկանյանը, Աբրահամ Սարգսյանը, Կարինե Գարսեւանյանը, Քրիստինե Հովհաննիսյանը, Վանիկ Մկրտչյանը, Արմեն Կարամեսյանը, Ասոն Քարաջյանը երկար ժամանակ է, ինչ հայ թատերվեստն են ներկայացնում Ֆրանսիայում եւ ոչ միայն այստեղ: Վերջին «Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը» ներկայացվել է Փարիզում, Վալանսում, Մարսելում, Լիոնում, Շվեյցարիայում, Բելգիայում, Հոլանդիայում: Այս գործն, իհարկե, իր բնույթով տարբերվում է թատերախմբի մյուս բեմադրություններից: Բայց արվեց այն ժամանակ (առաջին ներկայացումը տրվել է ապրիլի 19-ին, Փարիզի Յանց ակումբում), երբ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն էր լուծվելու Ֆրանսիայի Սենատում: Հայերեն ներկայացվող պիեսի տեքստի ֆրանսերեն թարգմանությունը հանդիսատեսն ուներ իր ձեռքի տակ:

Ներկայացումն արված էր հեսարիր եղանակով: Խաղին մասնակցող արտիստները եւ բեմադրության հեղինակ Նարեկ Դուրյանը ներկայացումից առաջ, հետո եւ ընդմիջմանը կազմում էին հանդիսատեսի հետ, պարզաբանում Հայոց ցեղասպանության հարցերը, տպառիչ պատասխաններ տալիս: Ինչպես նշում է «France-Arménie» ամսագրի մեկնաբան Լեոնին Օզկիրիզյանը, «դատարանի քարացած տեսարանից հետո պատմությունը հիշեցնող պատկերների մի շարք էր անցնում պատմիչի Նարեկ Դուրյանի միջոցով, ժամանակ առ ժամանակ հակառակորդների գիտակցության փաստերն արտահայտելով»: Նույն մեկնաբանության մեջ հեղինակը գրում է. «Փիրուզա Խալաթյանը Սողոմոնի մոր եւ տանտիրուհու (տիկին Դիսմանի) դերերում ցայտեց իր զգայականությամբ, միաժամանակ մայրական զգացումների արժանապատվությունը ներկայացնելով: Իրավաբանորեն նա ամեն դեր ունակ է խաղալու»:

Անշուշտ, հաճելի է այսպիսի գնահատականի արժանանալ: Սակայն երբ հանդիպեցինք Փիրուզա Կոզակյան-Խալաթյանին, տեսանք մի կնոջ, որը հասկանալով արտիստական իր հմայքը, բնավ էլ փառամոլությամբ չի տառապում, լավ գիտե իր տեղը, տալով իր մեջ եղած լուսավորը, ի տիսուր ավելին չի պահանջում: Ինքն ասես իր թատերախմբի Նարեկ Դուրյանի թատերախմբի կենսագրության խտացումը լինի. ճանապարհին է: Շարանցոնում Նարեկ Դուրյանի «թատերական պեսությունն» է ղեկավարում, Երեւանում ամուսնու՝ ճանաչված նկարիչ Հենրիկ Խալաթյանի հետ որդու համար է մտահոգ, Շվեյցարիայում հյուրախաղերի ժամանակ հոգում է նաեւ տնտեսական հարցեր... Առտնին հոգսերից զատ նա պետք է բեմ ելնի, պետք է բեմում հրավառություն անի (աշխարհով մեկ սփռված, օտար պատերի հայու բեկորներին ապրեցնելու համար թատերական ուրախություններն անչափ անհրաժեշտ են. սա շատ լավ գիտեն տարագիր հայերը): Ու ահա արտիստուհի Փիրուզա Կոզակյան-Խալաթյանը, որն աշխատել է Երեւանի դատանի հանդիսատեսի եւ Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան պետական թատրոններում, արդեն տասը տարի շրջագայում է Նարեկ Դուրյանի թատերախմբի հետ՝ փոքր ու մեծ ուրախություններ պարգեւելով աշխարհով մեկ սփռված հայերին: Ու թող մեղադրելի չերեւա, որ թատերախումբը ներկայացնում է հիմնականում կատակերգություններ (բացառություններ են «Դոն Կիխոտ»-ն ու «Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը»):

Անկախ իր կամքից Փիրուզա Կոզակյան-Խալաթյանը դարձել է հայ թատրոնի ներկայացուցիչներից մեկը Փարիզում: Ու կարող է համեմատաբար ճշմարիտ գնահատել մեր երկրի թատերական կյանքն այսօր:

– Մեզ մոտ Երեւանում, երբեմն խոսում են թատերական կյանքի ջղագարության մասին: Հասկանալի է, որ մեծ անհամեստություն կլիներ թատերական Երեւանը համեմատել Փարիզի, Լոնդոնի կամ ամերիկյան որեւէ խոշոր քաղաքի թատերական աշխարհների հետ:

– Անշուշտ, այնտեղ բոլոր հնարավորությունները կան ալացուցիչ ներկայացումներ բեմադրելու համար: Եվ այդպես էլ անում են, ասում է Փիրուզան: Սակայն պատկերացրեք, որ ինչ-որ բան, շատ կարեւոր բան պակասում է բոլոր այդ ներկայացումներում: Վերջերս ԱՄՆ-ում էինք, հյուրախաղերի էինք գնացել: Ազատ ժամանակ գտանք ու որոշեցինք որեւէ ներկայացում դիտել հանրահայտ Բրոդվեյի թատրոններից մեկում: Ներկա եղանք Չաքսի պիեսի բեմադրությանը: Հրաշալի ներկայացում էր, ամեն ինչն էր տեղ. եւ արտիստները, եւ զգեստները, եւ ծեւավորումը... Խոսք չկա: Բայց երբ այդ նույն պիեսի բեմադրությունը տեսա մեզ մոտ՝ Երեւանում, շատ ավելի հպարտ էի: Հասկանո՞ւմ եք, այստեղ արտիստները որեւէ պայման չունեն, տեղությունների մասին չասեմ, անգամ անչափ անհրաժեշտ զգեստը դժվարությամբ են գտնում: Բայց մեր Երեւանյան ներկայացումը տեղ էր իր ոգեղենությամբ, արտիստների նվիրվածությամբ: Հավատացեք, հուզմունքս ու հպարտությունս չկարողացա թաքցնել: Ես չգիտեմ, մենք երեւի ուրիշ տեսակ մարդիկ ենք, ուրիշ կավից հունցված: Այսքան նվիրում, այսքան ոգեղենություն ես ուրիշ որեւէ երկրում չեմ տեսել:

... Լսում էի Փիրուզային ու իմ մեջ նույն միտքն էր պտտվում. այսքան նվիրում ու ոգեղենություն դժվար թե լինի ուրիշ որեւէ ազգի արտիստների մեջ, որքան Նարեկ Դուրյանի թատերախմբի ամեն անդամն ունի: Արդեն տասը տարի այս թատերախումբը անիվների վրա է՝ Ֆրանսիայի, Եվրոպայի, աշխարհի ճանապարհներին: Արդեն տասը տարի թատերախումբը հայերի (եւ ինչու միայն հայերի) համար բացում է հայերի ոգու անսպառ գանձերը: Իր կարողությամբ անում է հնարավոր ամեն ինչ: Այս թատերախմբին, Նարեկ Դուրյանին, Փիրուզա Կոզակյան-Խալաթյանին եւ մյուսներին հանգստություն մաղթենք ու հոգու անդորրություն... Ոչ, հանգրվան մաղթենք, որպեսզի հանգստություն ու հոգու անդորրություն չլինի, որպեսզի բեմի վրա անվերջ տրոփի արվեստագետի ոգին:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Երանց կենացը, ովքեր ճանապարհին են

Նարեկ Դուրյանի թատերախումբը որոնում է ինքն իրեն

«Թեհլիրյանի դատավարությունը» ներկայացվել է Փարիզում, Վալանսում, Մարսելում, Լիոնում, Շվեյցարիայում, Բելգիայում, Հոլանդիայում: Այս գործն, իհարկե, իր բնույթով տարբերվում է թատերախմբի մյուս բեմադրություններից: Բայց արվեց այն ժամանակ (առաջին ներկայացումը տրվել է ապրիլի 19-ին, Փարիզի Յանց ակումբում), երբ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն էր լուծվելու Ֆրանսիայի Սենատում: Հայերեն ներկայացվող պիեսի տեքստի ֆրանսերեն թարգմանությունը հանդիսատեսն ուներ իր ձեռքի տակ:

Ներկայացումն արված էր հեսարիր եղանակով: Խաղին մասնակցող արտիստները եւ բեմադրության հեղինակ Նարեկ Դուրյանը ներկայացումից առաջ, հետո եւ ընդմիջմանը զրուցում էին հանդիսատեսի հետ, պարզաբանում Հայոց ցեղասպանության հարցերը, տպառիչ պատասխաններ տալիս: Ինչպես նշում է «France-Arménie» ամսագրի մեկնաբան Լեոնին Օզկիրիզյանը, «դատարանի քարացած տեսարանից հետո պատմությունը հիշեցնող պատկերների մի շարք էր անցնում պատմիչի Նարեկ Դուրյանի միջոցով, ժամանակ առ ժամանակ հակառակորդների գիտակցության փաստերն արտահայտելով»: Նույն մեկնաբանության մեջ հեղինակը գրում է. «Փիրուզա Խալաթյանը Սողոմոնի մոր եւ տանտիրուհու (տիկին Դիսմանի) դերերում ալացրեց իր զգայականությամբ, միաժամանակ մայրական զգացումների արժանապատվությունը ներկայացնելով: Իրավաբանորեն նա ամեն դեր ունակ է խաղալու»:

Անշուշտ, հաճելի է այսպիսի գնահատականի արժանանալ: Սակայն երբ հանդիպեցինք Փիրուզա Կոզակյան-Խալաթյանին, տեսանք մի կնոջ, որը հասկանալով արտիստական իր հմայքը, բնավ էլ փառամոլությամբ չի տառապում, լավ գիտե իր տեղը, տալով իր մեջ եղած լուսավորը, ի տիսուր ավելին չի պահանջում: Ինքն ասես իր թատերախմբի Նարեկ Դուրյանի թատերախմբի կենսագրության խտացումը լինի. ճանապարհին է: Շարանցոնում Նարեկ Դուրյանի «թատերական պեսությունն» է ղեկավարում, Երեւանում ամուսնու՝ ճանաչված նկարիչ Հենրիկ Խալաթյանի հետ որդու համար է մտահոգ, Շվեյցարիայում հյուրախաղերի ժամանակ հոգում է նաեւ տնտեսական հարցեր... Առտնին հոգսերից զատ նա պետք է բեմ ելնի, պետք է բեմում հրավառություն անի (աշխարհով մեկ սփռված, օտար պատերի հայու բեկորներին ապրեցնելու համար թատերական ուրախություններն անչափ անհրաժեշտ են. սա շատ լավ գիտեն տարագիր հայերը): Ու ահա արտիստուհի Փիրուզա Կոզակյան-Խալաթյանը, որն աշխատել է Երեւանի դատանի հանդիսատեսի եւ Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան պետական թատրոններում, արդեն տասը տարի շրջագայում է Նարեկ Դուրյանի թատերախմբի հետ՝ փոքր ու մեծ ուրախություններ պարգեւելով աշխարհով մեկ սփռված հայերին: Ու թող մեղադրելի չերեւա, որ թատերախումբը ներկայացնում է հիմնականում կատակերգություններ (բացառություններ են «Դոն Կիխոտ»-ն ու «Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը»):

Անկախ իր կամքից Փիրուզա Կոզակյան-Խալաթյանը դարձել է հայ թատրոնի ներկայացուցիչներից մեկը Փարիզում: Ու կարող է համեմատաբար ճշմարիտ գնահատել մեր երկրի թատերական կյանքն այսօր:

– Մեզ մոտ Երեւանում, երբեմն խոսում են թատերական կյանքի ջղագարության մասին: Հասկանալի է, որ մեծ անհամեստություն կլիներ թատերական Երեւանը համեմատել Փարիզի, Լոնդոնի կամ ամերիկյան որեւէ խոշոր քաղաքի թատերական աշխարհների հետ:

– Անշուշտ, այնտեղ բոլոր հնարավորությունները կան ալացուցիչ ներկայացումներ բեմադրելու համար: Եվ այդպես էլ անում են, ասում է Փիրուզան: Սակայն պատկերացրեք, որ ինչ-որ բան, շատ կարեւոր բան պակասում է բոլոր այդ ներկայացումներում: Վերջերս ԱՄՆ-ում էինք, հյուրախաղերի էինք գնացել: Ազատ ժամանակ գտանք ու որոշեցինք որեւէ ներկայացում դիտել հանրահայտ Բրոդվեյի թատրոններից մեկում: Ներկա եղանք Չաքսի պիեսի բեմադրությանը: Հրաշալի ներկայացում էր, ամեն ինչն էր տեղ. եւ արտիստները, եւ զգեստները, եւ ծեւավորումը... Խոսք չկա: Բայց երբ այդ նույն պիեսի բեմադրությունը տեսա մեզ մոտ՝ Երեւանում, շատ ավելի հպարտ էի: Հասկանո՞ւմ եք, այստեղ արտիստները որեւէ պայման չունեն, տեղությունների մասին չասեմ, անգամ անչափ անհրաժեշտ զգեստը դժվարությամբ են գտնում: Բայց մեր Երեւանյան ներկայացումը տեղ էր իր ոգեղենությամբ, արտիստների նվիրվածությամբ: Հավատացեք, հուզմունքս ու հպարտությունս չկարողացա թաքցնել: Ես չգիտեմ, մենք երեւի ուրիշ տեսակ մարդիկ ենք, ուրիշ կավից հունցված: Այսքան նվիրում, այսքան ոգեղենություն ես ուրիշ որեւէ երկրում չեմ տեսել:

... Լսում էի Փիրուզային ու իմ մեջ նույն միտքն էր պտտվում. այսքան նվիրում ու ոգեղենություն դժվար թե լինի ուրիշ որեւէ ազգի արտիստների մեջ, որքան Նարեկ Դուրյանի թատերախմբի ամեն անդամն ունի: Արդեն տասը տարի այս թատերախումբը անիվների վրա է՝ Ֆրանսիայի, Եվրոպայի, աշխարհի ճանապարհներին: Արդեն տասը տարի թատերախումբը հայերի (եւ ինչու միայն հայերի) համար բացում է հայերի ոգու անսպառ գանձերը: Իր կարողությամբ անում է հնարավոր ամեն ինչ: Այս թատերախմբին, Նարեկ Դուրյանին, Փիրուզա Կոզակյան-Խալաթյանին եւ մյուսներին հանգստություն մաղթենք ու հոգու անդորրություն... Ոչ, հանգրվան մաղթենք, որպեսզի հանգստություն ու հոգու անդորրություն չլինի, որպեսզի բեմի վրա անվերջ տրոփի արվեստագետի ոգին:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

«Էքսպո-2000»-ի առաջին արդյունքները

Դարավերջի համաշխարհային խոշորագույն սուրգաստեսին՝ «Էքսպո-2000»-ին Հայաստանի մասնակցությունը մեզ համար նշանավորվեց ոչ միայն մեր երկրի մշակութային-տնտեսական ներուժի պատշաճ ներկայացմամբ, այլեւ մի շարք գործնական պայմանագրերի ձեռքբերմամբ:

Ցուցահանդեսին, ի թիվս օտարերկրացի բազմաթիվ հյուրերի, հայկական տաղավար էին հրավիրված նաեւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի մշակույթի գործերի նախարարության պետքարտուղար Վոլֆգանգ Այխլերը, Վիտենբերգի «Լյութերեա» համալսարանական հիմնադրամին կից գործող «Մեսոոպ» հայագիտական կենտրոնի աշխատակիցները՝ կենտրոնի ղեկավար պրոֆ. Հերման Գոլցի գլխավորությամբ: Հիշեցնենք, որ 1998 թ. օգոստոսին Գերմանիայի հիշյալ երկրամասի մշակույթի գործերի նախարարության եւ ՀՀ մշակույթի, երիտասարդության հերցերի եւ սպորտի ու կրթության եւ գիտության նախարարությունների միջեւ ստորագրվել էր համագործակցության հուշագիր, որի մի շարք դրույթներ արդեն կյանքի են կոչվել: Եվ ահա «Էքսպո-2000» ցուցահանդեսը նպաստավոր առիթ հանդիսացավ, որպեսզի հիշյալ պատասխանատուներն ու ՀՀ մշակույթի նախարար Ռ. Շառոյանի գլխավորած պատվիրակությունը Հանովերում վերստին ննդարկեն հուշագիրը եւ շարունակություն հաղորդեն դրա դրույթներին: Որոշվեց այսուհետեւ ամեն տարի հայաստանցի երկուական ուսանողների ապահովել կրթաթոշակով՝ Սաքսոնիա-Անհալթ երկրամասում ուսանելու համար: Կարեւորություն տրվեց ընթացիկ տարվա սեպտեմբերին Հալլեում կայանալիք ընդարձակ գիտաժողովին՝ նվիրված Հայաստանին: Սրանցից զատ ՀՀ մշակույթի նախարարության պատվիրակությունը ներկայացրեց 3 ծրագիր՝ նվիրված հայկական հուշարձանների հետազոտմանն ու վերականգնմանը: Գերմանական կողմը խոստացավ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ եվրամիության ծրագրի շրջանակներում հուշարձաններին նվիրված ծրագրերն իրականացնելու համար:

Ա. Հ.

ՎԻԵՆՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ

«Ռեքվիեմը» ավստրիացի մենակատարների կատարմամբ

Կրոնս սեր մարդու եւ կյանքի նկատմամբ, անսպառ հավատ՝ ահա Մոցարտի աշխարհզգացողության հիմքը: Պուշկինը «Մոցարտ եւ Սալիերի» ողբերգության մեջ Սալիերիի լեզվով բնութագրում է Մոցարտի երաժշտությունը. «Ինչպիսի՞ խորություն: Ինչպիսի՞ համարձակություն ու ինչպիսի՞ ներդաշնակություն»: Մոցարտի վերջին ստեղծագործությունը՝ «Ռեքվիեմը», մեծ կոմպոզիտորի կարոտի երգը, հասնում է երաժշտության բարձրագույն գագաթնակետին: Նա տենդագին աճապարանքով ձեռնամուխ եղավ «Ռեքվիեմի» ստեղծմանը, որն ընդհատվեց 1791 թ.՝ կոմպոզիտորի մահով: Մոցարտի մահվան պատճառը մինչեւ այժմ էլ վիճելի է: Առասպելն այն մասին, թե Մոցարտին թունավորել է նրա հանճարին նախանձող Սալիերին, հիմա էլ պաշտպանվում է որոշ երաժշտագետների կողմից: Բայց միակ փաստը Սալիերիի խոստովանությունն է, որն արդեն հոգեկան խանգարման վիճակում էր արված: «Ռեքվիեմն» ավարտել է Մոցարտի աշակերտ Զյուսմայերը՝ կոմպոզիտորի էսքիզների ու ուրվագծումների հիման վրա: Աշխատանքի ընթացքում Զյուսմայերը սեփական երաժշտության ոչ մի տակտ չի գրել, այլ խնամքով պահպանել է ու մշակել այն, ինչ հորինել էր Մոցարտը: Դա երեւում է նաեւ նրանից, որ Մոցարտը սեւագիր վիճակում թողնելով «Ռեքվիեմի» զգալի մասը, չի գրել նաեւ ավարտը: Հավատարիմ մնալով մոցարտյան երաժշտությանը, Զյուսմայերն ավարտական մասում կրկնել է առաջին մասի երաժշտությունը՝ կրկնակի ֆուգայով, ստեղծելով երաժշտական բոլորապատում: «Ռեքվիեմը» սգո, հոգեհանգստի մեսա է, որը կատարում են ավանդական պատշամունքային լատինական տեքստով: Չնայած պատշամունքային տեքստին, Մոցարտի «Ռեքվիեմը» հեռու է Աստծո պատշամունքային ծիսակատարությունից: Երաժշտական արտահայտչական միջոցներով կոմպոզիտորը մարմնավորել է մարդկային ապրումների խոր աշխարհ՝ հոգեկան խռովք, վիշտ ու տառապանք: Ամբողջ ստեղծագործությունը ընկալում է հումանիզմով, ջերմ կարեկցանքով դեպի մարդու տառապանքները:

Երեկ «Արամ Խաչատրյան» համերգասրահում Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ ավստրիացի երգիչների կատարմամբ հնչեց Մոցարտի «Ռեքվիեմը»: Մենակատարներն էին Դոննա Էլենը (սոպրանո), Ուլրիկե Փիխլեր-Ստեֆենը (մեցցո սոպրանո), Թոմաս Զիգվալդը (տենոր), Պաուլ Արմին Էդելմանը (բաս): Մենակատարներից յուրաքանչյուրն իր ավանդի շնորհիվ երաժշտական աշխարհում հանրահռչակ է: Թոմաս Զիգվալդը հաճախել է դերասանի վարպետության վիեննական հայտնի «Max- Reinhardt-Seminar»-ներին: Մասնակցել է այնպիսի հանրաճանաչ մյուզիքլներում, ինչպիսիք են Լլոյդ Վեբերի «Հիսուս Քրիստոս Սուպերսթարը»՝ հուդայի դերակատարումով, Շյոնբերգի «Թվառներ»-ում՝ էնջորաս եւ Բեռնսթայնի «Վեստսայդյան պատմություն»-ում՝ Թոնի: Թոմաս Զիգվալդի երգացանկը ընդգրկում է նաեւ օպերետներ, տենորի համար գրված հիմնական դերերով: Դոննա Էլենի խաղացանկն ընդգրկում է հարուստ բեմական եւ համերգային կատարումներ, ներառյալ տարբեր ոճեր՝ բարոկկոյից մինչեւ ժամանակակից երաժշտություն, 2000 թ. հանդես կգա Յոհան Շտրաուսի անսամբլի հետ՝ Չինաստանում վիեննական մշակութային օրերի բացման առիթով: Ուլրիկե Պիխլեր-Ստեֆենն ներկայումս աշխատում է Վագների «Աստվածների անեծքը» օպերային նոր բեմադրության վրա՝ Գրացի օպերային թատրոնում:

ԷԼՄԻՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱ ԳԱՂԱՆԱՆՈՒՇ Է, ԹԵ՞ ...

Կատուն

Կատուն որոշեց անցնել փողոցն ու տեսնել ի՞նչ կար-չկար մոտակա բակերում: Ընդհանրապես փիչ էր հեռանում իր աղասանից ու նրա շրջակայքից, բայց երբ ուզում ու որ բակն ուզում՝ մտնում էր: Սա ամենեւին էլ չէր նշանակում, որ նա երես առած կատու էր (եւ դա կվկայեն նրան մոտիկից ճանաչած կատուները), պարզապես գտնում էր, որ իրեն էլ մյուսների նման, իրավունք էր վերապահված շրջելու հին պատմություն ունեցող իր փոքրիկ քաղաքում՝ ծագերի համար որեւէ ուսելիք ճարելու կամ հենց այնպես զբոսնելու: Նա սիրում էր այդ քաղը, բարձրահարկ, գեղեցիկ շենքի նկուղային հարկի իր անշուք անկյունը, բակը, դարավոր քքենին, զիգզագի գույներով ապրանքներ վաճառող կրպակը, որի տանիքին հանգրվանում էր երբեմն, ծալկոտվում արեւի տակ, հիշում անցած ժամանակները, երբ դեռ մկներ կային, աղքարկողը լի էին բազմապիսի ուտեստներով...

Բայց սա ամենեւին էլ չէր նշանակում, որ նա ծույլ կատու էր (եւ դա նույնպես կվկայեն մյուս կատուները), պարզապես շատ էր հոգնում այս ու այն կողմ վազվզելուց եւ հանգիստ էր տալիս ոտքերին: Ճալկոտվելուց հետո վերսկսում էր թափառումները: Շագերն իր հույսին էին: Ինքը սակավապետ էր, միշտ կիսաքաղց: Միշտ մտահոգ էր, բայց՝ անտրտունջ: Եվ, անշուշտ, ազնիվ կատու էր: Քանիցս էր առիթ եղել երիկ կամ նման մի բան թոցնելու հիշյալ կրպակից, սակայն իրեն թույլ չէր տվել: Ինքը չորս ոտք ուներ, լավ հոտառություն, եւ փույթ չէր, որ հաճախ էր ձեռնունայն վերադառնում տուն: Խիղճը հանգիստ էր:

Եվ ահա կատուն մայթից իջավ փողոց: Ու քանի որ աշխարհի ոչ մի երկրում կատուների համար հատուկ անցումներ չկան (եւ հարկավոր էլ չէ, որովհետեւ նրանց դժվար է բացատրել անցումների նշանակությունը), նրանք որտեղով ուզում, այնտեղով էլ հատում են փողոցները: Վտանգն անխուսափելի է: Այս կտվի պարագայում առավել եւս, քանի որ նա մտացրիվ էր:

Ամեն ինչ կատարվեց ակնթարթորեն: «Մերսեդեսի» հետ բախումից կատուն վեր շրտվեց, պտույտ գործեց օդում եւ վայր ընկավ: Գլխին եւ իրանին ստացած հարվածից խենթացած՝ նա տարօրինակ գալարվելով կորավ մոտակա շենքի շտամուտքում: Ավտոմեքենան արգելակվեց մի քանի մետր այն կողմ: Ներսում նստած ջահել տղերքը մի քանի վայրկյան ակնառիճ հետաքրքրությամբ դիտեցին այդ տեսարանը: «Ա-ռա, տեսա՞ք ոնց հելավ օդ»,- խնդմնդաց դեկի առջեւ նստած կլոր բերով տղան, եւ մեքենան պոկվեց տեղից: Ինչ-որ մեկը հայհոյեց նրանց ետեւից, ինչ-որ մեկն անշարժահայացության, անզգուշության համար մեղադրեց կտվին: Մի ուրիշն ասաց. «Դե, կատու է, էլի»...

Անցորդները գնացին իրենց գործին, կատուն մնաց՝ շտամուտքի մութ անկյունում կծկված ու անօգնական: Նա ոչ մեկին վնաս չէր պատճառելու, պարզապես անցնելու էր փողոցը...

Չէր կարողանում հասկանալ, թե ինչ էր կատարվել: Ոտքերը ջղաձգվում էին, հիշողությունն սկսեց հեռանալ իր տնից ու քաղից: Նա սուսուփուս ու հուսահատ փակեց աչքերը: Եվ ոչ ոք չիմացավ, որ աշխարհից մի կատու պակասեց...

ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Շիրակը» կրկին առջեւում է

Այսօր կանցկացվեն հանրապետության առաջնության բարձրագույն խմբի մրցաշրջանի հերթական 13-րդ տուրի հանդիպումները: Իսկ նախորդ 12-րդ տուրի չորս խաղերից տեղի ունեցան միայն երեքը:

«Շիրակ»-«Դինամո» հանդիպման առաջին խաղակեսում հաշիվը չբացվեց, բայց երկրորդում դաշտի տերերը ուժեղացրին ճնշումը եւ 3 անհաջողությունից հետո գնդակ ուղարկեցին մրցակցի դարպասը: 2 գոլ խփեց Արթուր Պետրոսյանը: Այժմ նա «Միկայի» խաղացող Սամվել Նիկոլայանի հետ 10-ական գնդակով գլխավորում է ռմբարկուների ցուցակը:

Երեւանի երկու թիմերի «Արարատ» եւ «Զվարթնոց» հանդիպումն անցավ անգիջում պայքարում եւ ավարտվեց 0-0 հաշվով:

Շարունակում է վերելքով հանդես գալ «Միկան»: Մայրաքաղաքի «Հրազդան» մարզադաշտում կայացած խաղում աշտարակցիները կարողացան 3-0 հաշվով հաղթել Երեւանի «Կիլիկիային» եւ մրցաշրջանային աղյուսակում տեղափոխվել 3-րդ հորիզոնականը:

«Լեռնագործ»-«Արաս» հանդիպումը կկայանա ավելի ուշ:

Մրցաշրջանային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	12	8	3	1	36-6	27
2. Զվարթնոց	12	7	3	2	23-12	24
3. Միկա	12	7	2	3	22-10	23
4. Արարատ	11	7	1	3	15-9	22
5. Արաս	10	6	1	3	22-15	19
6. Կիլիկիա	12	3	1	8	17-26	10
7. Դինամո	12	1	1	10	12-35	4
8. Լեռնագործ	11	1	0	10	11-45	3

«Արաքսը» դուրս մնաց պայքարից

«Ինտերտոտոյի» գավաթի խաղարկության առաջին իսկ փուլում պայքարից դուրս մնաց մեր հանրապետության միակ ներկայացուցիչ «Արաքսը» (Արարատ): Չեխիայի Օլոմուց քաղաքի «Սիգմա» թիմի հետ երկու խաղերում էլ «Արարատը» պարտություն կրեց (սեփական խաղադաշտում 1-2, հյուրընկալվելիս՝ 0-1 հաշվով): Ասես ավանդույթ է դառնում, որ մեր թիմերը արագորեն դուրս են մնում եվրագավաթների խաղարկություններից:

Այժմ տեսնենք, թե այդ մրցումներում ինչպես հանդես կգան Հայաստանի մյուս երեք թիմերը: Ժնեւում օրերս անցկացված վիճակահանությամբ որոշվել են Չեմպիոնների լիգայի եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլի զույգերը:

Չեմպիոնների լիգայի առաջին որակավորման ռաունդում Գյումրիի «Շիրակը» կմրցի Բելառուսի չեմպիոն ԲԱՏ (Բորիսով) թիմի հետ: Առաջին խաղը տեղի կունենա հուլիսի 12-ին, Գյումրիում, պատասխան խաղը՝ մեկ շաբաթ անց, մրցակցի դաշտում: Այս զույգի հաղթողը 2-րդ ռաունդում կհանդիպի Շվեդիայի «Հելսինգբորգ» թիմի հետ:

ՈՒԵՖԱ-ի որակավորման ռաունդում հանդես կգան Հայաստանի երկու թիմեր: Երեւանի «Արարատը» հանդիպելու է Սլովակիայի «Կոշիցե» թիմի հետ (առաջին խաղում հյուրընկալողի դերում կլինի «Արարատը»): Աշտարակի «Միկային» բաժին է հասել շատ ուժեղ մրցակից՝ Բուխարեստի «Ռապիդը» (այս զույգի առաջին հանդիպումը տեղի կունենա Ռումինիայի մայրաքաղաքում): ՈՒԵՖԱ-ի գավաթի որակավորման ռաունդի առաջին խաղերը կանցկացվեն օգոստոսի 10-ին, պատասխան խաղերը՝ երկու շաբաթ անց:

ՖՈՒՏԲՈԼԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մրցավարները հայտնի են

Եվրոպայի առաջնության հուլիսի 2-ին Ռոտերդամում կայանալիք եզրափակիչ խաղի գլխավոր մրցավարը հայտնի է: Դա 37-ամյա աղահովագրական գործակալ, շվեդ Անդրեաս Ֆրիսկն է:

Երկօրյա դադարից հետո վերսկսվեց պայքարը մեդալների համար:

Կիսաեզրափակիչ խաղերից մեկն անցկացվեց երեկ: Բրյուսելում մրցեցին Ֆրանսիայի եւ Պորտուգալիայի հավաքականները: Այդ հանդիպման գլխավոր մրցավարն էր Գյունտեր Բենկեն (Ավստրիա):

Մյուս կիսաեզրափակիչ հանդիպումը տեղի կունենա այսօր, Ամստերդամում: Եզրափակիչի ուղեգրի համար պայքար կմղեն Հոլանդիայի եւ Իտալիայի հավաքականները: Այս խաղի գլխավոր մրցավարը գերմանացի Մարկուս Մերկն է:

ՌՈՅԵՏԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

Լիբերտադորեսի գավաթը՝ «Բոկա Խունիորսին»

Հարավային Ամերիկայի ակումբային թիմերի առաջնության՝ Լիբերտադորեսի գավաթի խաղարկության եզրափակիչում մրցեցին բրազիլական «Պալմեյրաս» եւ արգենտինական «Բոկա Խունիորս» թիմերը:

Երկու խաղերն էլ ավարտվեցին ոչ-ոքի արդյունքով՝ 2-2 եւ 0-0: Կանոնադրության համաձայն, նշանակվեցին լրացուցիչ 11 մ հարվածներ: Դրանք ավելի դիմուկ իրացրին արգենտինացիները (4-2), որոնք եւ նվաճեցին պատվավոր մրցանակը: Սա «Բոկա Խունիորսի» երրորդ նմանօրինակ հաջողությունն է (թիմը մինչ այդ Հարավային Ամերիկայի չեմպիոնի կոչումը նվաճել էր 1977 եւ 1978 թվականներին):

Այժմ Միջմայրցամաքային գավաթի համար «Բոկա Խունիորսը» կմրցի եվրոպական երկրների Չեմպիոնների լիգայի հաղթող Մադրիդի «Ռեալի» հետ: Հանդիպումը տեղի կունենա Տոկիոյում, եկող տարվա հունվարին:

ՇԱԽՄԱՏ

Առաջատարը Լիլիթ Մկրտչյանն է

Տ. Պետրոսյանի անվան Հայաստանի շախմատիստի կենտրոնական տանը շարունակվում է հանրապետության կանանց առաջնությունը:

Հիանալի խաղ է ցուցադրում գրոսմայստեր Լիլիթ Մկրտչյանը: Անցկացված 8 տուրերում նա 6 հաղթանակ է տարել, 2 հանդիպում ավարտել ոչ-ոքի: Նա 7 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը (Լիլիթը 14 մասնակիցներից միակն է, որը ոչ մի պարտություն չունի): Հետաքրքրող խումբը առաջատարից ետ է մնում 1-1,5 միավոր «հեռավորության» վրա:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, առաջնության մասնակիցները, չեմպիոնուհու կոչումից բացի, պայքարում են նաեւ աշխարհի կանանց առաջնության փնջային մրցաշարի երեք, ինչպես նաեւ մինչեւ 20 տարեկան աղջիկների միակ ուղեգրի համար: Այստեղ առաջին հինգ տեղերը գրաված շախմատիստուհիներն իրավունք կստանան հանդես գալու հանրապետության եկող տարվա առաջնության բարձրագույն խմբի մրցաշրջանում: Սահմանվել են նաեւ որակավորման նորմներ: Միջազգային վարպետի նորման 13 հնարավորից 9 միավոր է, ազգային վարպետինը՝ 8,5 միավոր:

Անանդի վստահ հաղթանակը

Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում ավարտվեց շախմատի ավանդական փառատոնը, որը «Ֆրանկֆուրտ Չեսս Կլասիկ» անվանումն է կրում:

Բավականին հարուստ էր փառատոնի ծրագիրը: Հատկապես մեծ հետաքրքրություն էին առաջացրել արագ շախմատի երկու մրցաշարերը, որոնք անցկացվեցին երկու շրջանով: «Հսկաների մրցաշարում» հանդես եկան աշխարհի ուժեղագույն 6 շախմատիստները: Գուցե շատերի համար անսպասելիորեն, հաղթեց Վիշվանաթան Անանդը (Հնդկաստան), որը 10 հնարավորից վաստակեց 7,5 միավոր: Երկրորդ տեղը գրավեց աշխարհի 13-րդ չեմպիոն Գարրի Կասպարովը (Ռուսաստան)՝ 6 միավոր: Մրցաշարի ընթացքում Կասպարովը մրցել էր, եւ որոշ պարտիաներ անցկացրեց բարձր ջերմությամբ: Մրցանակային երրորդ տեղում է Ռուսաստանի մեկ այլ ներկայացուցիչ՝ Վլադիմիր Կրամնիկը՝ 5 միավոր: Հաջորդ տեղերը գրավեցին Ալեքսեյ Շիրովը (Իսպանիա)՝ 4,5, Պետեր Լեկոն (Հունգարիա) եւ Ալեքսանդր Մորոզեւիչը (Ռուսաստան)՝ 3,5-ական միավոր:

Հետաքրքիր պայքարում ընթացավ նաեւ երկրորդ մրցաշարը: Կազմակերպիչներն այն «վարպետների մրցաշար» էին անվանել, թեեւ այստեղ հանդես էին գալիս 8 հանրահայտ գրոսմայստերներ: Այստեղ առաջին չորս տեղերը գրավեցին ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող մասնակիցները՝ Մայքլ Ադամսը (Անգլիա), Վասիլի Իվանչուկը (Ուկրաինա), Եվգենի Բարեեւը (Ռուսաստան), Վեսելին Թոփալովը (Բուլղարիա):

Մեծ հավաք Ուիմբլդոնում

Մեկնարկել է «Մեծ սաղավարտ» շարքի երրորդ մրցանակը՝ Ուիմբլդոնի առաջնությունը: Անգլիայի մայրաքաղաքի մերձակա այս վայրում հավաքվել են աշխարհի ուժեղագույն 128 թենիսիստ-թենիսիստուհիները:

Տղամարդկանց մցաշարի հաղթողի հիմնական թեկնածու համարում են ամերիկացի Փիթ Սամփրասին: Համընդհանուր կարծիքով, թենիսիստուհիներից հաջողության ամենամեծ հնարավորություններն ունի զվեյցարուհի Մարտինա Հինգիսը: Այս մարզիկներն առայժմ արդարացնում են սպասելիքները. նրանք հեշտությամբ հաղթել են իրենց առաջին հանդիպումներում:

Մասնավորապես, հաղթանակներ են տարել նաեւ Եվգենի Կաֆելնիկովը, Մարատ Սաֆինը (Ռուսաստան), Վինսենթ Սփեյրին (ԱՄՆ), Սլավա Դոսեդելը (Չեխիա), Կատրին Մարոշին (Հունգարիա), Աննա Կուրնիկովան (Ռուսաստան), Օլգա Բարաբանշիկովան (Բելառուս):

Ուիմբլդոնի մրցումներում հանդես կգան նաեւ Հայաստանի երկու ներկայացուցիչներ: Սարգիս Սարգսյանը տղամարդկանց մրցաշարում իր առաջին հանդիպումը կանցկացնի գերմանացի Դեւիդ Պրինոսիլի հետ: Հարություն Սոֆյանը կմասնակցի հուլիսի 1-ից մեկնարկող պատանեկան մրցաշարին: Նա այդ իրավունքը նվաճել է՝ հաղթելով Կիեւում անցկացված ընտրական մրցումներում:

ՌՈՅԵՏԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

«Տուր դը Ֆրանսի» նախօրեին

Աշխարհի ուժեղագույն հեծանվորդները պատրաստվում են հանդես գալ ամենահեղինակավոր խճուղային հեծանվավազքում՝ «Տուր դը Ֆրանսում»:

Այդ մրցումներին նախորդեցին մի շարք բազմօրյա հեծանվավազքեր, որոնց մասնակիցները կարծես թե ստուգում էին իրենց պատրաստականությունը:

Կաստալոնիայի մրցանակի համար անցկացված հեծանվավազքի հաղթող դարձավ իսպանացի Խոսե Մարիա Հիմենեսը «Բանեստո» թիմից:

Շվեյցարիայի ճանապարհներով անցնող հեծանվավազքում հաղթեց զվեյցարացի Օսկար Կամենցինդը, երկրորդ եւ երրորդ մրցանակակիրներ դարձան իտալացիներ Դարիո Ֆրիգոն եւ Վլադիմիր Բելլին:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց
1. Կոդելյան: 2. Գիզա: 3. Բլդան: 4. Խամուս: 5. Եզդի: 6. Շալյապին: 9. Աբսիդ: 13. Պաստեռնակ: 14. Կառվարենց: 18. Ուրմիա: 19. Արսեն: 24. Սկրյաբին: 26. «Եդրաֆսյա»: 28. Ռաբաթ: 31. Վաթան: 32. Մաշիս: 34. Տհաս: 36. Սնոր:

Հորիզոնական
7. Բոսիչելի: 8. Գաբուզյան: 10. Հերա: 11. Բարբյուս: 12. Իլյա: 15. Հյուղակ: 16. «Մազեպա»: 17. Սուդան: 20. Նանս: 21. Վեռն: 22. Երամ: 23. Սոնա: 24. Սաղո: 25. Ռոդե: 27. Կառնե: 29. Հրաման: 30. Անգորա: 33. Սարս: 35. Կարախան: 36. Սաֆո: 37. Սիտարյան: 38. Վիկտորյա:



Ուղղահայաց
1. Ոմանք հրիստոնյա են, ոմանք էլ՝ ...: 2. Հայոց կաթողիկոս 387-ից: 3. Լեռ Հայաստանում: 4. Անգլիացի ֆիզիոլոգ: 5. Բնակավայր Հայաստանում, որը հայտնի է իր արտադրած գինիներով: 6. Աշխարհահռչակ թռիչ-մոդել: 9. Իրանական հեղափոխության պարագլուխը: 13. «Մենավոր ընկուզենի» կինոֆիլմի ռեժիսորը: 14. Հայոց պատմավեպ: 16. Հայոց դիցարանի Աստված: 17. Հայ լուսանկարիչ: 22. Քաղաք Կիպրոսում: 23. Հեռուստատեսային ծրագիր: 25. Հիտլերը Գերմանիայում, ...ը Ֆրանսիայում: 28. Նյութական կարողության տեր: 29. Հայոց դիցարանի վիշապաթաղ Աստված: 30. Հայաստանի Շորբուլաղ բնակավայրում պահպանված ցորենի բուսատեսակների կարգավիճակը: 32. Սրանով լի են «Բարի» լոտոյի տոմսերը:

Հորիզոնական
7. Հավաքուծարանով հայտնի բնակավայր Հայաստանում: 8. Պաշտպանական հնագույն զենք: 10. Կատվազգի կենդանի: 11. Կաբել, լար, ...: 12. Չկնաստեսակ: 15. Ասորեստանի թագավոր մ. թ. ա. 722-705-ին: 18. Քաղցրահամ գինու տեսակ: 19. Ասորյա տեղեկատվություն: 20. Նահանգ ԱՄՆ-ում: 21. Գեղ Հայկական լեռնաշխարհում: 24. Մադրասում լույս տեսած առաջին հայատառ ամսագիրը: 26. ԽՍՀՄ արտադրության ինքնաթիռ: 27. Գեղ Յակուտիայում: 31. «Գամառ-Քաթիփա» գրական կազմակերպության հիմնադիրներից մեկը: 33. ՀՀՇ-ածին կառույց: 34. Սովետական պատմաբան, պատմակենսագրական վեպերի հեղինակ: 35. Մանրբուրժուական հասարակական-քաղաքական հոսանքի կողմնակից, որը ժխտում է իշխանության, պետության դիկտատուրայի անհրաժեշտությունը: 36. Սնկի տեսակ:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Շաֆարախսի բուժման նոր եղանակ

Շաֆարախսով հիվանդ 12 անձինք, որոնք անցյալում սխիրված էին ամեն օր ինսուլինի մի քանի ներարկում կատարել, այժմ արդեն այդ բուժման կարիքը չունեն, քանի որ նրանց պատվաստել են, այսպես կոչված, «Լանգերհանսի կղզյակներ»՝ ենթաստամոքսային գեղձի բջիջներ, որոնք ինսուլին են արտադրում: Այս հուսադրող լուրն օրերս տարածեցին Կանադայի Էդմոնտոն քաղաքի Ալբերտա համալսարանի գիտնականները:

«Լանգերհանսի կղզյակների» պատվաստման փորձեր նախկինում էլ էին արվել: Վիճակագրական տվյալների համաձայն, աշխարհում նման փորձերի թիվն անցել է 260-ից: «Պուեն» հանդեսը տեղեկացնում է, որ դրանց արդյունքները անբավարար են եղել. հիվանդների միայն 12 տոկոսն է կարողացել ինսուլինի ներարկումներից զերծ մնալ մեկ տաբաթվա, իսկ 8 տոկոսը՝ մեկ տարվա ընթացքում:

Մինչդեռ կանադացի գիտնականների պատվաստումները ըստ երևույթին հաջող են անցել: 11 ամիս առաջ վիրահատված 12 անձանցից յուրաքանչյուրին ենթաստամոքսային գեղձի 300 մլն բջիջ է պատվաստվել 2-ական դոնորներից: Անցած ժամանակամիջոցում հիվանդները կամաց-կամաց առողջացել են եւ ինսուլինային ներարկումների կարիք չեն զգացել: Առաջիկա ամիսները թերեւս թույլ կտան առավել մեծ հավաստիությամբ խոսել աշխարհում լայնորեն տարածված շաֆարախսից բուժման նոր եղանակի հեռանկարայնության մասին:

Պ. Բ.

Պարաշյուտը հայտնագործել է Լեոնարդո դա Վինչին

ԼՈՆԴՈՆ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Բրիտանացի մի պարաշյուտիստ ապացուցել է, որ Վերածննդի տիտաններից մեկը՝ Լեոնարդո դա Վինչին է եղել գործող առաջին պարաշյուտի հայտնագործողը: Ադրիան Նիկոլասը օգտագործել է մի հարմարանք, պատրաստված այն էսքիզով, որ նա հայտնաբերել է Լեոնարդոյի 1485 թվականի նոթատետրում: Էսքիզը բուրգի տեսքով մի ֆիգուր է՝ ծածկված կտավով: Նիկոլասը՝ գտնվելով Հարավային Աֆրիկայում, փորձարկել է ինքնաշեն պարաշյուտը, որպեսզի վայրէջք կատարի երեք հազար մետր բարձրությունից՝ օդաթռիկով: Մինչդեռ, աերոդինամիկայի մասնագետները կանխատեսել էին, որ նա երբեք չի կարողանա դա անել:

ՀԱՄԱՌՈՏ

«Հայ-ադրբեջանական խաղաղությունը Թուրքիայի մեծագույն երազանքն է»

ԱՆԿԱՐԱ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքիայի 9-րդ նախագահ Սուլեյման Դեմիրելը հունիսի 28-ին Կարս կատարած այցի ժամանակ՝ անդրադառնալով հայ-թուրքական սահմանի վերաբացմանը, կրկին նշել է, որ դա կախված է հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորումից: «3-5 դուրուշի համար մենք չենք վաճառի ադրբեջանցիների վստահությունը եւ հույսը», նշել է Դեմիրելը: Ընդգծելով Կովկասյան երկրների հետ հարաբերությունների զարգացման, ինչպես նաեւ տարածաշրջանում կայունության հաստատման կարեւորությունը, Դեմիրելը շեշտել է այս նպատակով հայ-ադրբեջանական առճակատման կարգավորման կարեւորությունը: «Հայ-ադրբեջանական խաղաղությունը Թուրքիայի մեծագույն երազանքն է», նշել է Դեմիրելը: Թուրքիայի նախկին նախագահին ուղեկցել են ՆԳ նախարար Թանքանը, գործող կառավարության անդամներ:

Սերժեն-Յուրս բնակավայրի շրջանում շարունակվում է մարտը

ՍՈՍԿՎԱ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երրորդ օրն է ինչ շարունակվում է մարտը դաշնային ուժերի եւ չեչեն գրոհայինների միջեւ Սերժեն-Յուրս բնակավայրի շրջանում, հաղորդում է «Ինտերֆաքս» գործակալությունը: Ռուս զինվորականների տվյալներով, այնտեղ պաշարման մեջ են հայտնվել մոտ 200 գրոհայիններ: Մինչդեռ, ինչպես հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը, երեքշաբթի չեչեն գրոհայինները հարձակում են գործել ռուսական զինվորական շարասյան վրա Ավտուրի բնակավայրի շրջանում: 12 ժամ տեւած ճակատամարտի ընթացքում զոհվել են 30 ռուս զինվորներ եւ 5 չեչեն գրոհայիններ: Մեկ այլ ընդհարման ժամանակ Գրոզնու մերձակայքում Չական Յուրս գյուղի մոտ զոհվել են 10 ռուս հատուկ ջոկատայիններ: Այս մասին գործակալությանը հայտնել են չեչենական աղբյուրները: Չորեքշաբթի ռուսական իշխանությունները խոստովանել են 10 մարդու կորուստը:

Վրաստանը չի միանա Ռուսաստան-Բելառուս» միությանը

ԹԲԻԼԻՍԻ, 28 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Կավկազ-պրես» գործակալության հաղորդմամբ, երկուշաբթի տեղի ունեցած մամլո ասուլիսում Վրաստանի նախագահ Շեւարդնաձեն հայտարարել է, որ Վրաստանը չունի որեւէ ցանկություն միանալու «Ռուսաստան-Բելառուս» միությանը: Նման նախաձեռնությունները բնորոշելով որպես «արմատական», Շեւարդնաձեն միեւնույն ժամանակ նշել է, որ Թբիլիսին նախապատվությունը տալիս է ԱՊՀ պետությունների հետ հետագա ինտեգրացման տարբերակին:

Հայներարտբանկը հայտարարում է անկախ աուդիտորական ընկերության ընտրության

ՄՐՑՈՒՅԹ

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ տարածքում բանկային աուդիտ իրականացնելու իրավունք եւ բավարար փորձ ունեցող կազմակերպությունները, որոնք նաեւ կարող են մատուցել մասնագիտացված խորհրդատվական ծառայություններ: Համապատասխան կազմակերպությունները կարող են մինչեւ սույն թվականի հուլիսի 15-ը, ժամը 18.00 դիմել Հայներարտբանկ ներկայացնելով նշված ոլորտներում հնարավոր համագործակցության առաջարկությունները:

Առաջարկություններց իրենց մեջ պետք է ներառեն աուդիտի իրականացման ժամկետը, ինչպես նաեւ միջնորդավճարի մեծությունը: Որպես լրացում առաջարկությունները պետք է ներառեն աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ աուդիտի իրականացման առաջարկվող մեթոդները, խորհրդատվական ծառայությունների ոլորտում համագործակցության նկարագրությունը, համապատասխան փորձի առկայությունը եւ վերը նշված ծառայությունների դիմաց վճարվելիք միջնորդավճարի կառուցվածքը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի հետեւյալ ոլորտներին.

1. **Տարեկան աուդիտի իրականացում (2000 թ.)**
- Բանկի տարեկան գործունեության համապարփակ աուդիտ
- Բանկի ընդհանուր գործունեության կատարելագործման խորհրդատվություն
- Ներքին վերահսկողության, կառուցվածքի եւ հաշվապահական հաշվետվությունների ուսումնասիրություն եւ դրանց կատարելագործման վերաբերյալ խորհրդատվություններ

2. **Խորհրդատվական ծառայություններ**
- Բանկի ռազմավարական զարգացման ծրագրի վերաբերյալ խորհրդատվություն
- Բանկային ռիսկերի կառավարման վերաբերյալ խորհրդատվություն
- Ֆինանսական, հարկային եւ իրավաբանական խորհրդատվություն

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք զանգահարել
Հեռախոս՝ **(3742) 58-71-10**
Ֆաքս՝ **(3742) 58-71-10, AT&T (3742) 151-813**
E-mail: **office@impex.bank.am**

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երեւան 375010, Նալբանդյան 2

Ուշադրություն

Կազմակերպությունների ղեկավարներին, սեփականատերերին, ծեռներեցներին եւ բոլոր նրանց, ովքեր առնչվում են ֆինանսական հաշվետվությունների հետ եւ ցանկանում են ծանոթանալ հաշվապահության գաղտնիքներին եւ բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը՝

Հայաստանի հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիան (ՀՀԱԱ) առաջարկում է հատուկ դասընթացներ

«Ֆինանսական հաշվառման եւ կառավարման սկզբունքներ»

անվանմամբ:

Դասընթացը կօգնի Ձեզ՝
- ծանոթանալ ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքներին,
- գնահատել ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը,
- հաշվարկել փաստացի ինքնարժեքը
- կայացնել ռազմավարական որոշումներ:

Դասընթացի ավարտից հետո տրվում է վկայական:

Դասընթացը տեւում է 40 ժամ, ուսման վարձը՝ 30 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ **54-16-65, 24-91-39, 24-91-78, 24-94-67**
Հասցե՝ **Կ. Ուլնեցու 31, 5-րդ հարկ**
էլ. փոստ՝ **aaaa@arminco.com**

Հեռուստացրույցներ

29 հունիս

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Լատինական փաստաբանը»
10.10 Մանրամասներ
10.20 Մամուլի կրոակ
10.30 Բոհեմ
11.05 Գ/Ֆ «Հմայիչ հիմարիկը»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 «Արեւիկ». եկեք երգենք
18.00 Հեռուստասերիալ «Լատինական փաստաբանը»
19.00 1 լուր
19.10 «Խոշոր շահում» (նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ՝
19.10 Կեսգիշերային ճեպընթաց)
19.45 Լաբիրինթոս
20.00 Բժիշկ եւ հիվանդություն
20.25 Արակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.50 Պրեմիերա
22.00 «Բարի ակնքարք»
23.10 Հիթ շերթ
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

ՊՐՈՄԵԹԵՎՍ

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.30 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Մահացու ճակատամարտ»
19.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
20.00 Լրաբեր
20.35 Ռ. Մավիսակալյանի «Հարցեր» հեղինակային ծրագիրը
21.20 Օրը
22.25 «1-02» լրատու
22.35 «Ձեղնահարկ»
22.50 Գ/Ֆ «Լեդիի դիմանկարը»
(24.00 Լրաբեր)

09.00 Տոմար
19.05 Չոջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Ի դեմ
20.30 Ասպարեզ
21.10 Հրապարակ
22.05 Գ/Ֆ «Թեւավոր ռոլերները»
0.35 Ակնքարք
0.40 Գ/Ֆ «Մոլա Ֆլեդերս» (ավարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.45 «100 տոկոս» ծրագիրը
17.10 _Մինչեւ 16 եւ բարձր
17.40 Համով պատմություններ
17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
19.00 Նորություններ
19.30 «Կալամբուր»
20.00 Գ/Ֆ «Եկեք վաղը» (դերերում՝ Ե. Սավինովա, Ա. Պահանով, 1963 թ.)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Ալյասկան, սեր» (դերերում՝ Վ. Մաշկով, Ա. Ժարկով, 1992 թ.)
01.00 Նայիր
01.35 Նորություններ
01.50 Սերիալ «Նորությունների ծառայություն»

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20, 7.50, 8.40, 9.45 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
8.20, 10.20 Սեւով սպիտակի վրա
8.30 ՊՏՊ-ի փոստը
9.20 Հեռուստատեսային ՀՄՍ. հերթապահ բաժանմունք
10.35 Մուլտսերիալ «Դե, սպասիր»
10.45 Մուլտսերիալ «Սեւ ծովահենը»
11.15 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Երկխոսություններ կենդանիների մասին
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Մարյինա ռոշչա»
15.00 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.45 Երկու ռոյալ
17.35 Իմ XX դարը
18.35 Անուշ լինի
19.20 Սերիալ «Փախստական միանձնուհիները»
20.15 «Սպիտակ թութակ» ակումբ
20.45 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. կիսաեզրափակիչ
22.45 Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն. օրվա ամփոփումը
23.00 «Մեր գործը». Սանիսլավ Կուչերի ծրագիրը
00.35 Կինոյի ժամ. Լորա Լերը «Դատապարտված հետաքննություն» ֆիլմում (ԱՄՆ)
02.25 Հերթապահ բաժանմունք

«ԻՄԱՍՏԱԵՐ» վարժարանը

հայտարարում է 2000-2001 ուսումնական տարվա ընդունելություն տարբերակված ուսուցմամբ 8-րդ, 9-րդ, 10-րդ դասարաններում (հանրապետության պետական բուհերի բոլոր մասնագիտությունների համար):

Մասնագիտական առարկաները դասավանդվում են փորաթիվ խմբերով, բուհերի ընդունելության ծրագրերին համապատասխան:

Երաշխավորվում է կրթության բարձր որակ: Այստեղ աշխատում են անվանի դասախոսներ, դպրոցական դասագրքերի հեղինակներ եւ դասավանդման մեծ փորձ ու հմտություն ունեցող ուսուցիչներ: Շրջանավարտները (տարեկան 95 տոկոս) հենց առաջին տարում ընդունվում են պետական բուհեր:

Վարժարանի շրջանավարտների առանց ընդունելության քննությունների բուհ ընդունվելու արտոնություններին եւ այլ մանրամասներին ծանոթացեք տեղում:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, ժամը՝ 10:00-17:00:

Հասցեն՝ Խանջյան 5, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի բարձրահարկ մասնաշենք (մետրոյի «Զորավար Անդրանիկ» կայարանի դիմաց), 2-րդ հարկ, 241 սենյակ.
Հեռախոսներ՝
52-25-33, 52-23-93:

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

@rminco Global Telecommunications **Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:**

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուէր 1284 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 28.06.2000 Գինը՝ 100 դրամ